ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ՀԱՏԵՎԻՍ ԱՄՍԵԱՑ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1874

ՄԱՐՏ

ՊԱՐԱՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ (ՇԱՀՆՈՒՐԻ)
ՆԵՏԵՍԵԱՆՆ ՄԻՆՉ ՅԱՂԵՐՔ ՕՐԻՆԱՒԵՐ
ՍԵՒ ԼԵՌԻՆ ՄԵՐԴԷ
Պ. ՈՐՃԱՆ ԵՒ ՖԻԱՆՅԱ
ԷՒ ԻՄ ՍԵՐ
ՓԱՂԱՔԱՒԱՆԸ
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ
ԳԼԽՈՎ ՈՒԱՇԼԻՆՓՈՆ

ՁՄԻՒՌԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

Դ. ՏԱՐԻ 1874 ՄԱՐՏ

ԱԶԳԱՅԻՆ

ԹՂԹԱՒՅՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 3 Մարտ 1874։

Բաբելեամ, Քանի՛ վատոյժ և ինչքին արարած մ՚է մարդս այս աշխարհիս վրայ, քանի՛ անկայուն և դիւրափոխ են անոր ամենէն մեծապանծ և մնայուն համարուած շէնքը։ Թղկրակ մը, երկրաշարժ մը, տարափ մը, ձիւնաբեր բուք մը դայ, մի քանի օր տևէ, և իսկոյն մեր նիւթական և մտաւոր ոյժը կ՚ընդհատին, կ՚հատնին, Ճարտարութեան գործիներն, շոգի, նաւ, էլէկտրական թել, մեքենայ և ամէն ինչ որով

մեր իմացականութիւնն բնութեան զօրութեանց տիրելու կ'ձգնի, անդործութեան կ'դատապարտուին։ Երբ տարերաց որոտընդոստ ձայնը կ'զոռայ, մարդկային լեզուներն իսկ կ'ցամքին, հողիները դող կ'ելնեն, մարմինները կ'սառին և մահուան արհաւիրքը կ'պաշարեն մեր էութիւնը։ Իսկ եթէ տարերը քիչ մ'աւելի բարձր խօսին՝ եթէ երկիրն՝ փոխանակ մէկ րոպէի՝ կէս ժամ շարժի, եթէ ձիւնը փոխանակ մէկ աւուր՝ քանի մը շաբաթ տևէ այս մեր կողմերն, այս շէն ու մեծաշէն քաղաքներն, այս գիտութեան գանձերն՝ զորս անկորնչելի կ'կարծենք, այն դարաւոր աշխատութեան արդիւնքն որ մարդկային ազգի պարծանքը կ'կազմեն, այն խրոխտ և երկնասլաց հողիներն որ երկիրս իրենց խուզարկութեան համար նեղ կ'գտնեն, այն մեծափարթամ հարուստներն որ աղքատին հայի փշրունք մը կ'ղլանան, պարզապէս փոսը, անդունդը պիտի իջնեն անյարիր։ Այս գիտնալով՝ երբ՝ եթէ կ'ժամս՝ փառաբանելու մարդկային հնարագիտութիւնն ու քաղաքակրթութիւնն, որով անասուն բնութեան սիրապետելու մեծամտութիւնն ունի, երբ ըսէ թէ՝ մարդիկ և իրենց գործերն յաւիտենական են, թէ յառաջադիմութիւնն անընդհատ է, և թէ վիհի մ'եղբը չենք պարեր մէկ ձեռքով Հեփեստի կռանն, միւսով Ապոլոնի քնարը բռնած . . . ։

Բայց, բարեկամ, իմ վերի մտերս՝ քեզի գրելու համար գրիչ առնելու անկարող կ'գտնուէին այս սառնաշունչ օդերուն ժամանակ, լեզուս բերնիս մէջ կ'սարտէր թէև, բայց հաւատա որ սիրոս կարելի եղածին չափ բարեկամութեան տաք պահելու կ'ջանայի իմ անշուք տանս մէջ ուր օրերով փակուած մնայի։ Իսկ եթէ մէկ կողմէ սոսկալով կ'դիտէի այն ձիւնապատ անապատն որ իմ առջևս կ'պարզուէր, և ինչպէս չունևորին տնակը, նոյնպէս ունևորին ապարանն կ'ծածկէր անխտիր, սա տարբերութեամբ որ այն կ'սառէր կարօտ իր խշտեկին մէջ, միւսն իր մարմնոր փեռարալի անկողնի և տաքուկ սենեկի մէջ կ'կաղդուրեր, միւս կողմէ կ'ինդայի նկատելով որ ողբմասիրութիւնն դունէ դուռ կ'շրջէր և կիսամեռ աղքատին ու անտերունչ ընտանիքին հայ ու ածուխ կ'բաժնէր, մահուան ճիրաններէն շատ մ'եղկելիներ կ'ազատէր։ Ո՛հ, բարեկամ, ինչ ճերմակ օրեր անցուցինք սև սև տեսիլներով, ինչպէս բոլոր մայրաքաղաքս ատեն ատեն թաղուած մնած ձիւներու ներքև, ինչպէս հաղորդակցութիւնը դադրելով Լաբոնի բնիկներու պէս կ'ապրէինք և ինչ մեծ վնասներ պատահեցան, տեսլորդ է նկարագրել։ Այսպիսի ձմեռներ տարեական են հիւսիսային երկիրները, նոյն իսկ 'ի Հայաստան, սակայն հիւսիսային բնիկներն պատրաս-

տուած են սառնաբեր օդերու, և կ'տոկան, մինչդեռ մեր բնակարան-ներն, մեր դպեստներն, մեր կենցաղավարութիւնն զուրկ են այն պայ-մաններէն որ ձիւն ու սառ կ'դիմադրաւեն։

Բայց ի՞նչ պիտի լինին պատահական և վաղանցուկ ձմեռան մը պատ-ճառած աղէտքն, եթէ ներելի է ըսել, այն բարոյական ձմեռան մօտ՝ որ տարին տասներկու ամիս մեր հոգիները սառ կ'պահէ և ազգային կենաց օդաչափը ջերմութեան աստիճան մ'անգամ չ'ցայտներ։ Ամենու-րեք պաղ և անհամ կռիւներ, ամենուրեք մտոսի և անիմաստ վէճեր կը յուզեն մեր ազգայնոց զլուխներն, իսկ կենսատու և ջերմ խնդիրներ հոգիներու մէջ մեռա՛ ջեն դաներ, վասն զի հոգիներն անզգայ սառած են։ Անիրաւութիւնը, յանդգնութիւնն և ստութիւնը յարդ ու պատիւ կ'ստանան մեր մէջ, իսկ բարին, արդարասէրն ու օրինասէրը կ'հալա-ծուին։ Խրիմեանի անկումէն վերջը՝ ոմանք կարծեցին թէ ամէն սառա-պանաց պատճառն ու Սահմանադրութեան թշնամին վերցաւ, հետե-ւապէս արդարութեան և բարեկարգութեան ոսկեդար մը պիտի սկսի։ Բաղ. ժողով մ'առաջնոյն յաջորդեց՝ ժառանգելով անոր կիսակատար գործերն, և քանի մը հին ինձեռոտ խնդիրներ, և ապա եկաւ Տեղա-պահ մը, և ապա ձիւն և փոթորիկ, որ կերպով մ'ընդարմացուց բոլոր պաշտօնական մարմինները։ Ընդհանուր ժողովը Քաղաքականն ընտրե-լէն ետև՝ ազգային գործոց բեռն ասոր կոնակը դրաւ և ինք մէկդի քաշուեցաւ։ Ուստի այժմ իր անյայտութեամբն ու լռութեամբը կը փայլի այս ժողովն։ Ո՞ պիտէ, թերևս այս հանգստեան ժամանակ՝ ազ-գին երեսփոխաններն միտք ու լեզու կ'սրեն, ազգին պիտոյքն ու վերքը կ'քննեն, գաղտնի կ'խմբուին, կ'բանակցին, մեր աղէտից գարմաններ կ'պատրաստեն որպէս զի ժամանակին ներկայացնեն։ Ի՞նչ և է, երանի՛ թէ մեր նախորդ ատենական խուսափութիւններէն ծաղած չարիքն ապա-գային համար մեզի զգաստութեան դասեր դառնային և մեր ուշադրու-թիւնն աւելի կենսական խնդիրներու մղէին քան թէ երկպառակու-թեան և կուսակցական կրից։ Նորածին Քաղաքական ժողովն միու-թեան գիծ մը պիտի լինէր երկու ներհակ դրութեան մէջ, աջակողմ-եան և ձախակողմեան կուսակցութեանց մէջ, սակայն այս միարար կամ հաշտարար առաքելութիւնն պիտի կարենա՞յ 'ի կատար հանել։ Այս անհնարին է։ Զիրար վանող զօրութիւններ կարելի չէ զոդել, իրարու հակառակ կարծիքներ դիւրին չէ շաղկապել. այլ էական կէտն է զսոնոնք ազգային շրջանին մէջ պահելու ջանալ և այնպէս ընթացք մը բռնել որ տարբեր ճամբով նոյն նպատակին հասնին, այս է ազգին վե-

բաշխութեան։ Արդ՝ այժմու Քաղաքական ժողովն կերպ մ՚ազգական յայտարարութեամբ իր պաշտօնը հռչակեց, իր գաւառութիւնն վեր հանելու ջանայ և բոլոր կուսակցութիւնները մի և նոյն ջրով լուայ։ Ան ատեն աջակողմեանն մէկ կողմէ ըսաւ. «Խմն է այս ժողովն, վասն զի իմ կարծիքս կ՚գտանի, պահպանողական է» և դրեթէ Խրիմեանը մոռցաւ. միւս կողմէ ձախակողմեանն ըսաւ. «Իմ հարազատ ծնունդս է այս ժողովը, վասն զի Խրիմեանի վրայ տարած յաղթութեանս պտուղն է, հետևապէս իմ կարծեցս ներկայացուցիչը։» Բայց իրօք ոչ այս ոչ այն կողմը սրտագին ողջոյն մը տուին նորընծայ ժողովին և իրենց գովեստները թէութեամբ վատնեցին։ Ուստի՞ է այս երկդիմութիւնը։ Քաղաքական ժողովն իրեն յատուկ գոյն մը չունի, որոշ քաղաքականութեան մը չհետևիր, և եթէ բանաւոր է գործէն դատել գործողն՝ պարտ է ըսել որ աւելի ետին կ՚նայի նա քան թէ առաջ։ Արդարև կը ճգնի նա գործել, վստահութիւն շահիլ, սակայն ոչ միայն իրեն կտակուած հին խնդիրներու մէջ կ՚տարուբերի, այլև աւելի հետամուտ կը թուի իր ձեռնհասութենէ վեր գործոց տնօրէնութեան քան թէ ուղղակի իր դիմացն ելնող խնդիրներու լուծման։ Վերջին վարչային տնօրէնութեանց մէջ մեծ մեծ խորհուրդներ ու բառեր կ՚կարդամ, Վաբչապետանոց, Ակոդեմիա և այլն, որոց հաստատութեան Քաղ. ժողովը կ՚աջակցի և մինչև անգամ դրամական օգնութիւն կ՚խոստանայ։ Բայց որ հեղինակութեամբ և ինչ հիման վրայ կ՚կազմուին այս հաստատութիւնները, որ իշխանութեամբ ելումտից կշռին մէջ նոր ծախք մը կ՚աւելնայ. այն իշխանութեամբ որ նախորդ Քաղ. ժողովին հրահանգներ խմբագրելու և առանց Ընդհ. ժողովոյ վաւերացման՝ միամիտ Պատրիարքի մը ստորագրել տալու կ՚յորդորէր։ Նոյն պատմութիւնն է մերինը։ Ցուն չգնուած կամ կարասիք կ՚գնենք, բոպիկ կ՚քալենք և մեր գլուխը թաց ու պսակ կ՚կապենք։ Որչափ գործադրելի է վարչային տնօրէնութեամբ մը լեզու մը ստեղծել կամ կոկել, նոյնչափ հնարին է խումբ մը մարդոց լեզուաբանական և գիտական հեղինակութեան արտօնագիր շնորհել։ Երևակայէ Ակադեմիա մ՚որուն նախագահը ԶամուբՃեան մը և ատենագրիրը Միքայէլեան մը լինի և այն ատեն ծառէն դուշակէ պտուղը։

Ըստ երևոյթին՝ Քաղ. ժողովն ուսումնական խնդիրներով կ՚զբաղի որպէս զի իր դլխէն վար կախուած աղդային ծանր գործերը մոռնայ և փոքր ինչ սփոփի։ Նախ՝ դուք իմանայիք՝ որ սովոր էք ազդ. Պատրիարքարանի ունչ ընել, այնպիսի խնձոր մը նետեցիք մեր նորակազմ

Քաղ. ժողովին առջև որ սկսաւ տատամսիլ։ Ճշմարիտը՝ շնորհաւորա-
կան աղաւոր պարգև։ Իր զօրութեան և քաղաքականութեան փորձաքա-
ը պիտի լինի այն և արդէն երեսյած արդիւնքը սոյն զօրութեան և
քաղաքականութեան վրայ մեծ դաղափար մը չեն տար ձեզի անշուշտ.
բայց դուք հեռու էք, և հետևապես անհամբեր։ Կնճռոտ է ձեր
գործն, և զայն հիւսողներն անդամ եթէ քակել կամենան չպիտի կա-
րենան առ այժմ։ Կան խնդիրներ որ վարչութիւններ կ'լուծեն երբ
վարչութիւնները զանոնք լուծելու հնարագիտութիւնը չունին։ Ձե-
րինն ալ այս կարգէն է։ Յաջողութեան ծայր մը կ'երևի. ձեր կուսա-
կալն ընկաւ։ Կ'հասկընամ որ Եդեսեանի խնդիր չէ այդ այլ իրաւուն-
քի, կ'հասկընամ որ թէ Սահմանադրութեան և թէ Կեդրոնական
վարչութեան դէմ պիտի ոչայնք եթէ ժողովրդեան ձայնն անլսելի
մնայ և Եդեսեան չվերադառնայ, բայց դուք տակաւին ամէն միջոցնե-
րէ չէք սպառած և ազգային դերագոյն առեան մը կայ որ կրնայ իր
կշիռը դնել նժարին մէջև Ճշմարտութեան և արդարութեան յաղթա-
նակին նպաստել։ Ուստի սրտմտիլ պէտք չէ այլ խորհիլ և օրինաց Ճամ-
բէն չշեղիլ։ Մինթ Աղթամարցիք, Վանեցիք հոգի չունի՞ն։ Ես ծե-
ռացայ և տակաւին Խաչատուրի և Պողոսի խնդիրներն անվճար կ'մնան։
Թէև Խաչատուր և Պողոս հարուստ են, կ'վճարեն միշտ, տակով կը
խաղան, և ոչ թէ ձեզի պէս բողոքներով՝ որոյ արձագանքը մէկ ա-
կանջէ կ'մտնէ միւսէն կ'ելնէ, և մինչև անդամ խեղճ Տեղապահ՝ հան-
դուցեալ Նիկողայոսի մտատկին յատակը աղթամարեան ոսկիները կը
ծակեն։ Լաւ, Աղթամարայ գործը տասներկու տարիէ 'ի վեր կ'երկա-
ռաձգի, մասնաժողովներ, յանձնաժողովներ, համադումար, մեծա-
դումար կրօնական ժողովներ չկրցան վերջտալ այս անսպառելի հանդին
և դեռ այս օրերս նոր կերպարանքով երևան դալով՝ նոր 'ի նորոյ հա-
մադումարներ կազմուելյան և տեղեկագիրներ պատրաստուելյան։ Խա-
չատուր անպաքատ է թէ ոչ, մատ ունէր իր նախորդին սպանութեան
գործին մէջ. այս էր ահա լուծանելի խնդիրն։ Ազգային վարչութիւնն
'ի պաշտօնէ հրատարակեց ժամանակին որ Խաչատուրի ընտրութիւնն
անվաւեր է, վասն զի Պետրոսին արիւնաթաթաւ վեղարն իր դլուխը
դրեր էր, և այս՝ ամբաստանութեան սոսկալի պարագայ մ'էր։ Բայց
տարիներ առաջ՝ իբրև քնիչ Վան ղրկուող Կարնոյ Առաջնորդին տե-
ղեկագիրն հանելուկ մ'էր, այն և ոչ միանգամայն կ'ըսէր։ Այն ատեն
Խաչատուրի կուսակիցներն օր ըստ օրէ շատցան, մանաւանդ երբ իմա-
ցան որ անոր հետ Աղթամարայ աթոռն ալ բառնալու խորհուրդներ

կան, և Պատրիարքարանի վրայ ներգործեցին։ Այս ներգործութեան ու ոսկիին արդիւնքն է որ ցարդ կաթողիկոսի անունը պահող Խաչատուրի խնդիրն յաւիտենական դատ մը դարձուց, և մեր եկեղեցականաց բոլոր դիտութիւնն ու ատատուածարանութիւնը սպառեց։ Թող չպարծի Անկլիա որ ինք միայն Դիզրաէլիի պէս՝ երկարատև ու այլանդակ դատեր ունի, որ նոր ըմբնցաւ, մեր Պատրիարքարանը կ'պերազանցէ այս մասին, վասն զի երբէք կրօնական մ'անաչառութեամբ դատած և օրինաւորութեամբ անոր դէմ վճիռ տուած չունի։ Իր դատաստանական օրէնքն է առուշտեղը կապել, և յանցանքն՝ եթէ հրապարակային չէ, արձակել, իսկ եթէ ծանր է ու հանրածանօթ՝ մոցընել՝ քնոտութիւն երկարաձգելով։ Ասկից կրնաս երևակայել թէ նոր համագումար կրօնական ժողովին տեղեկագիրն ի՞նչ եղրակացութիւն կ'պարունակէ։ Չպիտի ըսէ՞ նաև որ Խաչատուր մեղապարտ է, այլ պիտի ըսէ, եթէ մեղապարտ էր, այնչափ ատեն Պատրիարքարանի մէկ անկիւնն ապաշխարելն ու ոսկի գիծելու տեղ վատնելն իրեն քաւութիւն համարուելով, թոյլ տրուի որ Կաթողիկոսն իր տեղը վերադառնայ և աթոռը նստի։ Նոյնը չեմ կրնար ըսել նաև Վանայ Պօղոս վարդապետին համար։ Բայց այս աւելի ճարպիկ, աւելի խիզախ, աւելի յաջող յանցաւոր մ'է։ Երբեմն կռնակը չդիտեմ որ պէյին կամ ամիրային տուած, դատաստանէ խոյս տուաւ, ժամանակ մ'անցայտ ըսուս կեցաւ և այժմ նորէն իր նախճիրներն ապատ համարձակ կ'շարունակէ։ Այսպիսի կրօնաւորներ, եկեղեցոյ աղտեր, դաս մը դատաճան հայոց գործիքն են որ նպատակ ունին օրինաւոր վարչութեան դէմ դժուարութիւններ հանել, իրենց ձին խաղցընել, 'ի վնաս ազգին։ Եւ կան խել մը կոյր և ապականակիր մարդիկ մեր մէջ որ այսպիսի հրէշներ պաշտպանելու չափ կ'մոլեգնին։ Վայ այն ազգին որ ոճրագործը, սրբապիղծն անպատիժ թողլով անզգամութեան և անօրէնութեան քաջալերը կ'հանդիսանայ։ Իսկ մեր վարչութիւնները կ'ներեն այս աղտեղութեանց, կ'թողուն որ ասոնք ապականեն, քայքայեն ժողովուրդը, վասն զի հայրական կառավարութիւններ են։ Է՜հ, ըստ իս՝ դիւական են, և իրենց պաշտօնին ամենէն էական մասն՝ դատաստանական իշխանութիւնը՝ զանց կ'ընեն, մեղակցութեամբ։ Վասն զի ճշմարիտ հայր մը, հայր մ'որ իր ընտանեաց բարուց և վարուց վրայ կ'հսկէ, անոր օգուտն ու ապագան կ'մտածէ, չհանդուրժեր երբէք որ իր զաւակունքը դայլերու և աղուէսներու որս ընկնին, այլ իր բոլոր բարոյական զօրութեամբն, օրինաց բոլոր ներգործութեամբը կ'զլնի առանին և ընկերական թշնամոյն դէմ և անոր

գլուխը կ'ջախջախէ։ Եւ կ'պտուին մեր մէջ բաւական ապուշ մարդիկ որ մեծ յանցաւորները թողլով՝ երբեմն անմեղ աղտոտ գործերն պարտկելու ջանալով, կ'ելնեն երևակայական յանցանօք այս այն կ'ամբաստանեն, բծախնդրութեամբ այս այն կ'աղտոտեն, արդէն անկեալ Խրիմեանն կ'հալածեն, համագումար ժողովի մը մէջ անոր աթոռ մը տալը քրէական մեղք կ'համարին, և զանի 'ի դատ կ'կոչեն. մի միայն կուսակցական զձուռ ոգին գոհ ընելու համար՝ լրագիրը ոմանք այս ամբաստանութեանց ձայնակից կ'պտուին և մինչդեռ դատուելու պատրաստ եղող անձը կ'բդխտեն անխնայ, դատաստանէ խոյս տուող կրօնաւորները, դատաւորը տակն ու վրայ, և բարոյական, խիղճ, կրօն, իրաւունք ոտնակոխ ընող վեղարաւորները կ'ջատագովեն . . . ։

Գեր. Ներսէս եպիսկոպոս՝ որ Էջմիածնէն Ճամբան յարդարեր էր գէպ 'ի Կ. Պոլսոյ պատրիարքութեան, հանդուցեալ Տեղապահին տեղն անցնելով՝ շատ ազգայինք կարծեցին որ նա պիտի յաջողի ազգին այս ողորմելի վիճակին դարման բերել։ Բայց տեղապահութեան աթոռն ելնելն ու իջնելը մէկ ըրաւ։ Ինչ է պատճառն. անձնական տկարութիւնն, լրագրայ ոմանց դէմ զգացած սրանեղութիւնն, Քաղ. ժողովին հետ անհամաձայնութիւն։ Եթէ անձնական տկարութիւն ըսուի, այդ տկարութիւնը նոր չհասած է վրան, և կրնար պաշտօնն ընդունելէն առաջ՝ ինքզինքը կշռել. հետևապէս այս պատճառն շատ ՌԷՌԼ է. եթէ քանի մը գրիչներու ոճն, ըսուի, ինք մամլոյ ազատութեան բարեկամ և գրչի տէր եկեղեցական մ'է, և ամէն յարձակում վանելու կարող, ուստի այս պատճառը տղայական է. եթէ գիւանին գէմ ցաւունէր, ըսուի, այդ ցաւը սահմանադրապէս կրնար գարմանուիլ, ուստի այս պատճառն ալ անհաստատ է. ուրեմն ի՞նչ էր. միթէ ինքզինքը հալարարայ ցոյց տալու, Տո-գաֆեի վրայ պատառները շրջաբերական ուղղելու մտօք ընդունեց տեղապահութիւնն և մէկ քանի շաբաթէն հրաժեշտ տուաւ։ Այս ալ սին փառասիրութիւն մ'է։ Ըստ երևոյթին՝ Գեր. Ներսէս սրբազանն ազգին բեռը ծանր դտաւ և մէջ տեղ շատ կնճռոտ խնդիրներ, որոյ գլխաւորն է ազգային Սահմանադրութեան վերաքննութիւնն։ Քննիչ յանձնաժողովն իր գործն աւարտեց և զարմանքս կ'տանի դիտելով որ Քաղ. ժողովը վերաքննեալ օրէնքն Ընդհանուրին ատենը հանելէն առաջ՝ պատրիարքական ընտրութեան խնդիրը հանելու կ'պատրաստուի, որով նախորդ կուսակցները պիտի նորոգուին։ Այս ծուռ քայլ մ'է, ծուղակ մ'է, ուստիցս արդի կիսամեռ Սահմանադրութիւնը չպիտի ազատի։ Կ'յիշեմ որ երբ Պալաֆէնիի

քննութեան խօսքը կար, Նախ ընտրեցէք ձեր Կաթողիկոսն և ապա քննութիւնը կ'դայ ինքնին, ըսին, և դեռ պիտի դայ։ Նախ ընտրենք Պատրիարքն և ապա կ'քննենք Սահմանադրութիւնն, ըսին, և Խրիմեանի օրով ոչ ինչ չեղաւ։ Հիմակ ալ նոյն բանը պիտի պատահի եթէ նախ Պատրիարքն ընտրուի։

Նամակիս Նիւթն ըստ մեծի մասին կրօնականները դրաւեցին, և դեռ չլմընցուցի։ Մեր չորս կողմը թշնամիներ պաշարեր են և կ'յարձակին մեր եկեղեցւոյ և ազգային սեպհականութեանց դէմ թէ գրչով և թէ սրով։ Անցեալ օր Բեթղէհէմի այրն էր յոյն միաբանից շահատակութեան և անլուր սրբապղծութեան ասպարէզն հայ մանկան մը գաղաղին դէմ, հայոց իրաւանց դէմ, այսօր ալ Սիօնի լերան վրայ՝ Փրկչի վանուց փլած պատին վերաշինութեան՝ յոյն և լատին կրօնաւորներ իրաւունք մը կ'յարուցանեն։ Լաղ օղլու մը կ'յանդգնէր հայերն յաւիշտակիչ անուանել և մինչև անգամ սուրբ Յակոբայ վանուց վրայ աչք անկել՝ սնդելով որ հայք սուրբ Տեղեաց վրայ սեպհականութեան հիմնաւոր իրաւունք մը չունին։ Ո՞վ պիտի պաշտպանէ մեր իրաւունքը. գրչի դէմ գրիչ շարժել կարելի է, և արդէն Գեր. Խորէն եպիսկոպոս Պ. Լաղ օղլուի գլուխը ճշմեց պատմական անհերքելի փաստերու ներքև, ու 'ի լուր աշխարհի ցոյց տուաւ որ հայք նորեկներ, յաւիշտակիչներ չեն յԵրուսաղէմ, այլ օրինաւոր կալուածատէրներ, որ հազար տարիներէ 'ի վեր կայան և սեպհականութիւն ստացած են սուրբ Տեղիքը, այնպէս որ արքայական հրովարտակներ 'ի ձեռին պատրաստ և կարող են իրենց իրաւունքը հաստատել. սակայն բուռն միջոցներու դէմ ի՞նչ գործածել, եթէ ոչ բուռն միջոցներ։ Երբ մեր Կեդրոնական վարչութիւնն անտարբեր կ'մնայ և լոկ թաղթերներ գրելով կարծէ թէ ամէն բան կ'յաջողի, կ'բուսնի, երբ տեղական իշխանութիւնն՝ ինչպէս Բեթղէհէմի գործին մէջ յայտնապէս յունաց կողմը կ'ծռի և սուլիններն մեր կրօնաւորաց կուրծքին կ'ուղղէ, որոնք անվրդով կ'մնան այս սպառնալեաց դէմ, երբ տէրութիւնն իր շնորհած հրովարտակները կ'մոռնայ և հայոց իրաւունքը վէճի տակ կ'ձգէ, ի՞նչ կ'մնայ ընել Ս. Երուսաղէմի Ամէն. Պատրիարքին եթէ ոչ միաբանութեան գլուխն անցած՝ բողոքել առ համայն ազգայինս, և անոնց բարոյական զօրութիւնը հայցել որպէս զի, ինչպէս այլ պարագայից, այս անգամ ալ մաքառի ամէն անիրաւ պահանջումներու դէմ և քարի կտոր մը, հողի թիզ մը անգամ չյանձնէ անկուշտ և անխղճ թշնամիներու . . . ։

ՇԱՀՆՈՒՐ

ԵԴԵՍԵԱՆՆ ՍԻՆՕԴ ՅԱՂԵՐՁ ՕՐԻՆԱՍԻՐ

. . . Խմբագիր,

Ձեր փետրվար ամսաթերթին մէջ հրատարակուած նամակ մը կը մեղադրէ զԴեր. Եդեսեան եպիսկոպոս՝ որ իբր թէ Քօրտելիօ գտնուած միջոցին իրեն եղած հաշտարար առաջարկութիւն մը մերժեր է «իր անխաղաղասէր ոգին» յայտնելով, որով և գործէն այս ազգավնաս վիճակին հասնելուն պատճառ եղեր է։

Մենք առանց քննելու հոս թէ այնպիսի ծանր և դժնդակ պարագաներու մէջ, որոյ սաստկութիւնն ու դառնութիւնն տակաւին կը շարունակուի, խոհական օրինաւէր անձ մը, ըսել կ՚ուզեմ սոսկականի մը կողմէ եղած այսպիսի «հաշտարար առաջարկութիւն մը» որ Վ. սեմ. Կուսակալին բարձր հաւանութիւնն չէր զրեցած և դուցէ երբէք չզրեսնուր, Դեր. Եդեսեանի կողմէ ընդունելի և գործադրելի ըլլալու համար մինչև որ ասոնցմէ հարկ եղած երաշխաւորութիւնները կրնար ընծայել, առանց քննելու այս կարևոր կէտս՝ կ՚ըսեմք, որ սակայն քննութեան արժանի է, սա պարզ և էական հարցումն կ՚ուղղենք յարգոյ նամակագրին, որու անկեղծութիւնը կ՚ուզեմք ընդունիլ, և որու հետեւարար անկեղծ ուշադրութիւնը կը հրաւիրեմք։ Դերապատիւ Եդեսեան եպիսկոպոս, որու ամենապովելի մէկ հանգամանքը ազգային իշխանութեան և պատուոյ յետին ծայր նախանձախնդիր ոգի մը կրելն է, պէտք էր, կրնար, խոհեմութիւնն և նոյն իսկ օրինասիրութիւնը կը ներէր իրեն որ և է իրաւախոհութիւն ընդունիլ, մինչդեռ Պատրիարքական Աթոռին դիմելու պարտաւորուած՝ անոր ընելիք անօրէնութեան սպասելու վրայ կը գտնուէր. մանաւանդ այնպիսի իրաւախոհութիւն մ՚որու հետևութիւնն անյայտ էր, և որ ընտրական գործողութիւններն, որոյ համար յստակապէս եկած էր Իզմիր, չէ թէ 'ի կատար հանելու, այլ ոչչափ կարող է՝ գէ-բացընելու դեպի քանի մ՚օրուան պայմանաժամ՚կը շնորհէր իրեն։ Ստուգիւ հաղուագիւտ շնորհք։ Ինչ կը պատասխանէ Դեր. Եդեսեան եկեղեցականը երբ այս առաջարկութիւնն իր ականջը կը հասցընեն։ «Ես մինչև որ աղ. Պատրիարքարանէն հրաման չառնում՝ դէպ 'ի Զմիւռնիա քայլ մ՚անգամ չեմ կրնար

ընել» կ'ըսէ։ Օրինասէր ղպացումէ բղխած լինչ գովութեան արժանի կանոնաւոր պատասխան։ Եւ ասոր համար մեղադրելի պիտի համարուի Դեր. Եդեսեան. ոչ, քան. լիցի։ Թողնենք մեղ ըսել յարգոյ նամակագիրը, որ մենք և Իզմիրի Բոլոր ժողովուրդն իր գաղափարէն չենք, և տարբեր կերպով կը մտածենք նոյն իսկ այս պատասխանիս վրայ, որ անտարակոյս պատիւ, չէ թէ արատ, կը բերէ Եդեսեանի անպղծելի սիրբանց։

Մ * * *

Եթէ այս նամակը պատասխան մ'է նախորդ գրոյն՝ անոր հրատարակութիւնն ալ մեր Ընթերցողաց պատասխան մ'է անոնց որ մեր անկողմնակալութեան վրայ կասկածներ կ'ստածեն և մեղ բամբասելու արամադիր կ'գտնուին, որպէս թէ Դեր. Եդեսեանի հակառակ կողման կ'հակինք։ Մենք ոչ այս ոչ այն կողմը կ'հակինք. արդէն քանիցս կրկնած ենք որ մեր թերթը կուսակցութեան և մարդու մը բերան չկրնար լինել, կոչղնուրայն որ և է գատի պաշտպանութեան չկրնար խոնարհիլ, այլ որչափ մեր դատողութիւնը կ'ներէ՝ կ'աշխատինք Ճշմարտութեան հետեւիլ և կրնայ թերագրութենէ զգուշանալ։ Ուստի մեծ եղաւ մեր զարմանքն երբ ոմանք անպատեհ դատելով Եդեսեանն անհաշտ խորագրով նամակին հրատարակութիւնն և մանաւանդ անոր ստորև եղած քանի մը տող դիտողութիւնն՝ չեն ուզած նշմարել մեր բուն նպատակը։ Այս նպատակն էր՝ ըստ մեր խոստման՝ ներկայ խնդրոյն յարակից այլ մտացուած որ և է կարևոր իրողութիւն՝ 'ի լոյս ածելէն ետև՝ վիճաբանութեան ենթարկել, այնպէս որ Եդեսեանի խռովասիրութեան իբրև ապացոյց բերուած շատերուն անծանօթ կէտ մը պարզուի և ապացոյցին արժէքը Ճանչցուի։ Բայց վերոգրեալ նամակին տակի տողերն ու մեր դիտողութիւնն իբր թէ անհպաստ են եղեր Եդեսեանի, ինչ հոգ, քանի որ ասոնք չեն կրնար ջրել այն իրողութիւններն որ նպաստաւոր են կենսական խնդրոյն, և որոյ նկարագիրն 'ի սկզբան ըրած ենք։ Արդ՝ ինչպէս որ այս նկարագիրն Եդեսեանի հակառակորդներն անախորժ գտան, այժմ ես անոր կուսակիցներն նախորդ գրոյն հրատարակութիւնն անախորժ և փոփոխամտութեան ու հակասութեան հետևութիւն կ'համարին։ Սակայն մենք ոչ փոխուած ենք և ոչ հակասութեան մէջ, ըստ որում խնդրոյ մ'ամէն կողմը նկատելու և մինչև անդամ մեր հակառակորդաց առարկութիւններն մտիկ ընելու հանդարտութիւնն ունինք։ Եւ այս առթիւ կ'յիշենք Ս. Միլի սա խօսքը. «Պարտ է դատապարտել այն մարդն որ՝ խնդրոյն որ կողմն ալ նկատէ,

» բանակցութի մէջ անկեղծութեան պակասութիւն, կամ՝ չարամտութիւն, կամ՝ սուտ բարեսպասութիւն, կամ՝ կարծեաց անհերոպրեն կ'յայտնէ։ Բայց պէտք չէ այս պակասութիւններն մեր հակառակորդաց վերագրել, որովհետև մեր հակառակորդներն են, այլ պէտք է պատուելոր և է կուսակցութեան պատկանող անձն որ հանդարտութիւն ունի նկատելու և ուղղութիւն ճանչելու ինչ որ են ճշմարտաց պէս իր հակառակորդներն և անոնց կարծիքը, անոնց վնասաբեր լինելիք որ և է բան չչափազանցելով, անոնց նպաստաւոր լինելիք որ և է բան չծածկելով։ Ահա այս է հասարակային վիճաբանութեան ճշմարիտ բարոյականութիւնը . . . ։»

Եւ մենք այս դրութեան հետևեցանք. ջարկինք ինչ որ ջարնել պէտք էր, պաշտպանեցինք ինչ որ պաշտպանել մեր պարտքն է, սակայն երբ մեղի ուղղեալ նամակէ մ'իմացանք որ հաշտութեան առաջարկութիւն մ'եղեր է՝ զարմանք յայտնելով պարզդիտողութիւն մ'ըրինք՝ իրողութեան մը վրայ, թէ ինչպէս Գեր. Եղեսեան զայն մերժեր է։ Ի հարկէ այս մեր դիտողութիւնը կ'ջրի՝ եթէ առաջարկութեան պայմաններն անընդունելի և առաջարկողին անկեղծութիւնն կասկածելի էին։ Արդ՝ վերոգրեալ նամակին հեղինակն իրողութիւնը չժխտեր, այլ կ'պնդէ թէ Գեր. Եղեսեան չէր կրնար ընդունիլ այնպիսի առաջարկութիւն մ'որ սովորական անձի մը կողմէ կ'լինէր, թէև անկեղծ, առանց այն երաշխաւորութեանց որ իրական արդիւնք մը խոստանան, և թէ Ս. Տեղապահն ազգ. Պատրիարքարանի հրամանին սպասելու պարտաւորութիւն ունէր։ Այս ալ բանաւոր պատասխան մ'է. կ'մնայ միայն իմանալ թէ արդեօք երաշխաւորութիւն խնդրելու համար բանակցութիւն եղած է առաջարկողին հետ, և թէ Պատրիարքարանի իրաւասութեան պիտի դպէր եթէ Գեր. Եղեսեան՝ հաշտութեան անկեղծութեան համոզուելէն ետև՝ զայն ընդունէր։

*
* *

Բայց ահա մեր նախորդ թերթով հրատարակած նամակին 'ի պատասխան Մայիսի 1850 թիւին մէջ շրջաբերական մ'ալ Գեր. Եղեսեանի կողմէ գրուած, որ նոր կերպարան մը կ'տայ կերպով մը վէճի նեղքև եղող խնդրոյն։ Այս շրջաբերականը չուրանար որ Գեր. Եղեսեանի հիմնաւոր կամ անհիմն հաշտութեան առաջարկութիւն մ'եղած է, այլ բացէ 'ի բաց սուտ կ'հանէ անոր մէջ յիշուած մէկ պայմանը, պնդելով թէ Մեծ. Պ. Պէրկամալեան բաց ո՛ անգամ խօսած չէր ընդ-

բ-ՐԻԵԱՆՑ ՎԵՐՔԵՐԵԼ, ՄԻՆՉԵՎ՝ ԸՆԴ ՀԱԿԱՌԱԿԻՆ՝ ՆԱԽՈՐԴ ՆԱՄԱԿԱՊԻՐՆ ԳՐԱԾ ԷՐ ԹԷ ՄԵԾ. Գ. ԽՈՒՄԱԲԵԱՆ ԳԵՐ. ԵԳԵՍԵԱՆԻ ՀԱՄԱՐ ԸՍԱԾ ԼԻՆԻ ԹԷ ՈՐՉԱՓ ՈՐ ԿԱԲՈՂ Է ԳԻՒ-ԲՈՅԸՆԷ ԸՆԳԲՈ-ՐԻԵԱՆՑ ՀՈՐԾԸ . . . : ԱՍՏՑՄԷ ՈՐՆ Է ՃՇՄԱՐԻՏԸ. ԹԷԼԵ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ ԾԱՆՐԱԿՇԻՌ ԵՒ ՀԱՒԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ Է ՔԱՆ ԹԷ ՄԵՐ ԱՐԺԱՆԱՀԱՒԱՏ ԿԱՐԾԱԾ ՆԱՄԱԿԱՊԻՐՆ, ՍԱԿԱՅՆ ԱՅՍ ՊԱՐԱՊԱՅԻՍ ՄԷՋ՝ ԸՍՏ ՈՐՈՒՄ ԿԸՕՆԱԿԱՆ ՉԷ ԽՆԴԻՐԸ, ՊԷՏՔ Է ՍՊԱՍԵԼ ՅԻՇԵԼ ՆԱՄԱԿԱՊԻՐՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ, ԿԱՄԼԱՒ ԵՒ, ՊԷՏՔ Է ՄՏԻԿ ԸՆԵԼ ՆԱԵ ՄԻՒՍ ԿՈՂՄԵՐՆ, ԱՅՍՊԻՍԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿՆ ԵՒ ՁԱՅՆ ԳԵՐ. ԵԳԵՍԵԱՆԻ ԱՒԱՆԴՈՂԸ, ԵԹԷ ԲԱՐԵՀԱՃԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՒ ԽՕՍԵԼՈՒ, ՈՐՊԷՍ ԶԻ ԽՆԴՐՈՅՆ ԱՅՍ ԿԷՍՆԱԼ ՊԱՐԶՈՒԻ :

ՍԵՒ ԼԵՌՆԻՆ ՄԱՐԴԸ

ԺԳ

— Ատամ, ես Շամբ դիւղէն եմ, Շուռոթայ մնտիկ : Հայրս բաւական մեծ անուն և ստակ ունէր : Ստակը վստարկեր էր առևտուրէ, անունը՝ Կարմիր վանքը մի անգամ քրդայ ձեռքէն քաջութեամբ ազատելուն : Պարսիկ Էմիրն՝ որուն յարդն ու հանարումը կ'վայելէր հայրս, նշան մը անոր տուաւ իբրև արիութեանը վարձ, և հայրս ալ հաւատարիմ կ'երևէր պարսից առիւծու դրօշին : Ի բնէ գործունեայ և բաղդախնդիր՝ սուէպ թէ տուրևառի և թէ ուրիշ քաղաքական գործոց համար Վանայ ծովուն կողմերը կ'երթևեկէր, ինչպէս Բերկրի, Արճիշ, Խլաթ, Արծկէ և մինչև Սիմ'լեռը, ուսկից արմենք կ'բերէր և Նախիջևան կ'ծախէր : Շատ անգամ ձմեռուան դիշերներ իր զաւակներն՝ որոց անդրանիկն էի, կ'հաւաքէր չորս դին և իր ուղևորութեանց ժամանակ դչխկն եկած արկածները մեզի կ'պատմէր : Չեմ մոռնար բնաւ դէպ մ'որ իմ վրայ մեծ տպաւորութիւն մ'ըրած է, երբ տակաւին տասնուԹ տարու էի :

Մի անգամ հայրս Արճիշու սահմանը մտնելու ատեն՝ քանի մը ձիաւոր քիւրդեր իր վրայ կ'յարձակին, բոլոր ապրանքը կ'կողոպտեն ու կծիկը կ'դնեն : Հայրս՝ կեանքն անվնաս մնալուն ուրախ՝ Ճամբան կ'շա-

բունակէ և մեծաւոր ագարակ մը պատասխարան կ'փնտռէ։ Անդ կ'տեսնէ մշակ մ'որ հոն իր բահովը կորովաբար կ'պատռէր և Հայաստանի ազատութեան վրայ երգ մը կ'երգէր։ Խսկոյն երկրագործին կ'մօտենայ և անոր ալնիւ կերպարանէն կ'զարնուի։ Մանր այլ կայծի պէս աչքերի կարմրանիշ, լայն ճակատ և նորընծայ վարդապետի մը մօրուս ունէր։

— Հայաստանի ազատութեան վրայ կ'երգես դու, բարի մշակ, կ'ըսէ հայրս, բայց ագարակիդ սահմանն ազատ չէ տակաւին, վասն զի աւազակաց գունդ մը սա վարի ձորին կողմն ունեցածս թալէց դնաց։

Մշակն հօրս այս հեղնալի գիտողութեան վրայ սաստիկ կ'վիրաւորի, կ'կարմրի և կ'ըսէ.

— Այս կողմերը մանկիկ մը, գոհարազարդ հարս մը կրնան աներկիւղաբար, վասն զի եղուզակները պարբաւոր էն յարգել Արճիշու սահմանները։ Պատմածդ զարմանքս կ'պատճառէ, և եթէ կարծեն թէ Արճիշու շահէնին թեները կոտրած է, շատ կ'սխալին։ Ուսաի ցոյց պիտի տամ ինքզինքս անոնց որ խուզելու դառնուկ մը գտեր են քեզի պէս։

Այս ըսելով մշակն լոկ երկաթէ լախտ մը կ'առնու և ընդ առաջ կը վազէ, թէև հայրս քթին տակէն կ'ծիծաղէր այս մարդուն յանդգնութեան վրայ, և կ'յորդորէր զանի որ իր գիտաւորութենէ հետ կենայ՝ քանի որ բանը բանէն անցեր էր։ Մշակը մտիկ անդամ չըներ և կ'հասնի բլուր մ'ուսկից կ'տեսնէ ձորակին մէջ չորս քիւրդ՝ որ իրենց ձիերն խոտին վրայ արձակ ձգած՝ կարծես թէ իրենց մէջ կողոպուտ մը կը բաժնէին։ Մշակը վերէն ձայն կ'արձակէ ուժգին և կ'հրամայէ որ իրենց տեղէն չշարժին։ Ապա վար կ'իջնէ, քիւրդերն ոտք կ'ելնեն և դողդոջալով անոր առջևը կ'շարուին։ Մշակը հօրս կ'հարցնէ թէ ասնոնք էին գողերն։ Հօրս բացասական պատասխանին վրայ՝ նա խօսքը կ'ուղղէ քրդաց,

— Այս մարդն իմ բարեկամն է, կ'ըսէ, անոր ապրանքը գողցեր են, դուք չէք եղեր գողերն, վասն զի դուք մեր գաշինքը կ'յիշէք և զիս կ'ճանչէք, այլ ձերիններդ։ Ասանդ թողէք ձեր կողոպուտն, զոր ուրիշ տեղէ զարկած պիտի լինիք, և գացէք ինձ այս մարդուն ապրանքը գտէք բերէք։

Քիւրտերն առանց ձայն մը հանելու ձիերը կ'հեծնեն և կ'թռչին կ'երթան իրենց գողնն թող տալով։ Հայրս կ'զարմանայ այս մշակին բարոյական զօրութեան վրայ և կ'դառնայ անոր կ'ըսէ.

— Բարեկամ, Ս. Ստեփաննոս վկայ, խելքս չհասնիր այդ գործին։

Աստղակներուն պարագլուխն ես դու, թէ ոչ սջակիցը։ Այս վայրի մարդիկն ի՞նչպէս կատուի պէս կ'սքլին քու առջեւդ։

— Իմ բազիս զօրս թիւնը զրաված են։

— Մինթէ կ'յուսա՞ս որ վերազանան։

— Ոչ միայն պիտի դառնան այլև ապրանքդ պիտի մէկտեղ բերեն։

Բայց հայրս չէր հաւատար այս հրաշքին։ Նոյն պահուն ձայն կ'տարածուի թէ Շահէնն բահը թողեր լեսան աւեր է. ահարիւ նշան մ'էր այս։ Շահէն որս կ'փնտռէր, արիւն պիտի թափէր։ Ուստի դանդ դանդ գիւղացիք կ'վազեն մեր դանուած ձորակը։ Քանի մը ժամէն խուզարկու քիւրդերը կ'գառնան, իրօք հօրս ինչքն ամբողջ կ'բերին և մշակին ոտից առջև կ'գնեն։

— Ձեր խոստումը պահեցիք, կ'ըսէ մշակը քրդաց, և զոհ եմ, բայց մեր մէջ եղած դաշինքը չպահեցիք և ասոր համար զժգոհ եմ։ Մեր սահմանները պատահած որ և է գողութեան և սպանութեան հայ ու քիւրդ փոխադարձ պատասխանատու են։ Թոյլատուիք որ հայ բարեկամս կողոպտուի, կողոպուտը դարձուցիք թէև, բայց կերպով մը գողակից կ'սեպուիք։ Եթէ հայ լինէր գողն ի՞նչ պիտի ընէիք, մեր պայմանին համեմատ։

— Բաղուկը պիտի կտրէինք, ըսին քիւրդերը։

— Ուրեմն ես ալ այս բարեկամս կողոպտողին բաղուկը կ'ուզեմ, ըսաւ մշակը։

— Բայց չորս հոգի են։

— Չորս բաղուկ կ'ուզեմ, պատասխանեց մշակն աչքերէն հուր հանելով, և ձեզնէ ով որ չորս բաղուկ կ'արժէ, թող առաջ անցնի, իմ պատանդս է այն։

Քիւրդերն իրարու երեսս կ'նային, կ'սրտմտին։ Մին առաջ կ'անցնի վերջապէս և կ'ըսէ.

— Թէև երիս բաղուկ ունիմ, բայց չորսի գործը կրնան տեսնել։ Ծանր է խնդիրդ և սէղով կ'լուծուի։ Պատանդ կ'մնամ եթէ պայքարին մէջ պարտուիմ։

Եւ իսկոյն ձիով մօտակայ փոքրիկ դաշտը կ'արշաւէ, և մշակին կը հրաւիրէ 'ի նիզակամարտ։ Գիւղացիք կ'վազեն նոյն կողմը, բոլորակ մը կ'կազմեն որ հանդիսատես լինին՝ մշակին յաղթանակին վրայ վստահ։

Մշակը կ'գիտէ այս շարժումն պաղ աչքով և ախոյեանին միւս ընկերներուն դառնալով,

— Դուք չէք հաւատար որ վերն Աստուած մը կայ, կ'ըսէ մատովն

երկինցոյց տալով, և թէ ուխտագրուժը կ'պատժէ։ Արդէն ձեր կողմէ խոյացողն նկուն է, տէրի պէտք չունիմ զանի կործանելու, վասն զի իր խոշէն ներքև կ'կործանի և կ'հատատուէ որ գողակից յանցաւոր էք։

Ու ապա ծանրաքայլ կ'ուղղուի դէպ 'ի այն գաշտն որ յանկարծ մրցարանի փոխուեր էր. կ'մերժէ հեծնելու կրակատ սև երիվար մը զոր իրեն բերեր էին և միայն իր լախտը ձեռքը՝ կ'երթայ մրցավայրին մէջտեղը կ'կանգնի։ Ներկայ եղող բոլոր հայ գիւղացիք ակամայ զող կ'ելնեն մշակին այս ստոն ու անհոգ ընթացքին վրայ և կարծեն թէ գիտամամբ մահը կ'փնտռէ։ Պայքարը կ'սկսի ու երկայն ջուաբ։ Քիւրտը մի քանի անգամ գաշտին շրջանը կ'ընէ արշաւակի և ապա կայ տանելով տէգը մշակին կ'նետէ ուժգին։ Մշակն որ յայն վայր անշարժ կ'նայէր թշնամւոյն, յանկարծ գետինը կ'փռուի, և երբ տէգը կ'անցնի առանց իրեն դպչելու, ոտը կ'ելնէ, այծեմի պէս ոստում մը կ'տնէ, քիւրդին կողմը կ'սրանայ և լախտովն անոր բազկին զարնելով՝ զանի ձիէն վար կ'գլորէ։ Բոլոր հայ հանդիսականք յիծուԹեան աղաղակ մը կ'արձակեն, իսկ մշակը կ'գոչէ.

— Բազկին մէկն առի։

Իրօք քիւրտին աջ բազուկը խախտեր էր, և մինչդեռ միւս ձեռնով ուրիշ տէգ մը մշակին կուրծքին վարսելու փորձ կ'փորձէր, նոր հարուած մ'ևս կ'ինջեցնէ մշակն և բոլորովին գինամոլ կ'ընէ իր ոտոխը։ Նոյն միջոցին քիւրտին միւս ընկերները կ'փութան կուռն տալը, կ'խոստանան երկու բազուկ ևս բերել մշակին և իրենց վիրաւոր ընկերն առնելով կ'մեկնին։

Բայց մշակն իր քաջութեան արդիւնքն ընդ երկար չվայելեր։ Քիւրտերը վերստին մարտ կ'մղեն անոր դէմ. մշակն՝ որ վանական կեանքէ վարած էր ատեն մը, կ'սպասնէ քրիստոս գլխաւորն և կ'քաշուի Քարդաշտ, Ռշտենոյ Զօրայի տունը։»

Այս պատմութեան ատեն մեր ամենուն աչքն Ատոմին վրայ կ'դառնար։ Ատոմ կ'այլայլէր, կ'ժպտէր և փոքր ինչ կ'փքանար։ Հուսկ ուրեմն՝ երբ Անանուն խօսքն աւարտեց՝ դարձաւ Ատոմին ըսաւ.

— Կ'ճանչէս այս մշակը, կ'ճանչէս հայրս։

— Ատոմն է, ըսի ես անհամբեր։

— Գուրգէնն էր, ըսաւ Ատոմ, այն վանականն որու հետ սերտ յարաբերութիւն հաստատեր էի։ Բայց ի՞նչ հարկ կայ այդ երիտասարդութեանս մէկ պարագան պատմել և իմ անձնասիրութիւնս գրգռել, յաւելցուց Ատոմ։ Զէ թէ իմ այլ քու կեանքդ պիտի պատմէիր մեզ։

— Պիտի պատմեմ, բայց նախ կ'փափաքէի ինքզինքս ծանօթացընել քեզի, որպէս զի ըսելիքիս հաւատ ընծայես, և այս ալ միայն հօրս յանձնարարութեամբը կրնայի ընել։

— Հաւատացի որ Գուրդէնին՝ իմ բարեկամիս որդին ես, պատասխանեց Ատոմ։

— Ուրեմն կ'շարունակեմ խօսքս։

Արդ՝ հայրս օր ըստ օրէ կ'հարստանար և յաջողութեան մէջ իր հայրենի երկրին աղէտքը կ'մոռնար։ Իր վարկն այնքան տարածուց որ պարսից տէրութիւնը զինքը Շամբի մէջ հարկահան կարգեց, որով տեղւոյն գրեթէ իշխանը դարձաւ։ Հայրս թէև ինքնասէր՝ իր պաշտօնն արդարասիրութեամբ վարեց։ Հայոց վրայ ծանրացած արդ բեռը թեթևցուց, և դարձեալ դանձուն աւելի հասոյթ ցցուց քան երբոր հարկերը ծանր էին, վասն զի ստակ չէր խորեր։ Այսպէս բարօրութեան մէջ կ'ապրէր, իր զաւակունքն ըստ կարի կ'կրթէր, երբ յանկարծ, ինչպէս որ քաջ դիտես, Ատոմ, պատերազմի փողը հնչեց։ Գուրդէն դող ելաւ, իր առուտուրը դադրեցուց, բոլոր հարստութիւնն որ ցիր ուցան էին, ամփոփելու ջանաց ընդունայն։ Կ'փափաքէր որ պարսիկներն յաղթական ելնեն կռուէն։ Գէթհ Ալի շահն արդէն ռուսաց երկիրն արշաւեր էր տիրապետութեան ոգւով և քանի մը գիւղեր քանդեր։ Գէթհ Ալի չէր գիտեր տակաւին թէ ռուսք ինչչափ զօրացած էին քիչ ատենուան մէջ և Շահ Աբբասի օրերը կ'փնտուէր։ Ռուսի սուղի նստաւ իրեն այս արշաւանքն և մաղմնաց որ տէրութիւնն ալ ձեռքէն պիտի ելնէր։ Մատաթեան Գանձակի առջև պարսից բանակն արդէն խորտակեր և Պարսկաստանի դուռը բացեր էր Բասրէվիչին, որ վրէժ լուծելու համար դէպ 'ի Նախիջևան կ'գիմէր։ Պարսիկները շուարեր ու կատղեր էին հայոց դէմ, որ իրենց լուծը թօթուելու յուսով թշնամւոյն կ'օգնէին։ Հայրս ալ միշտ կ'ափսոսար ու կ'ըսէր. «Վատ, վատ կ'գործեն հայք, պարսից շղթայն քան ռուսինը թեթև է» և կը յորդորեր զիս որ տէրութեան հաւատարիմ հպատակ մնամ։ Արդէն քանի մը տարեկան էի, քիչ շատ դատելու կարողութիւն ունէի և կ'կարծէի որ հօրս այսպէս խօսել տուողն աւելի անձնական շահն էր քան թէ հայրենեաց։ Վասն զի չէի կարող համոզուիլ որ մահմետական Շահ մ'աւելի մարդասէր լինի քան քրիստոնեայ Կայսր մը, որու բարեդութիւնը կ'գովէին, մանաւանդ երբ պարսկահայոց քաշած տառապանքը կ'լսէի։ Բայց Գուրդէնին դէմ դալու չէի իշխեր, վասն զի նախ՝ հայրս էր, երկրորդ՝ հարուստ էր և իր կարծեաց մէջ յամառ և բուռն։

ԳՆՆԱԳԱՏԱԿԱՆ

Պ. ՌԷՆԱՆ ԵՒ ՃՐԱՆՍԱ.

Այս խորագրով անկլիական Հնգեպատանեբեայ Հանդէսին (Fortnightly Review) մէջ յօդուած մը տեսանք՝ Մածծինիի կողմէ գրուած իր մահուանէ ութ օր առաջ, այսինքն 1873 մարտի 3ին, Պ. Ռէնանի Մոռոլական և Բարոյական Վերաշինութիւն* անուամբ գրքին վրայ։ Գործ մ՚որ իր շրջանակին չպատասխաներ և Գրանքօ–Գերմանական մարտին ժամանակ [illegible] ինուած այլ և այլ հատուածոյ հաւաքածոյ մ՚է։ Պ. Ռէնան՝ որ տանջլի ծանօթ է մեր մէջ իր Քրիստոսի Կեանք անուն երկոքին, Գրանսայի անուանի խորհողներէն մին և Սորբոնի աշակերտն է։ Բնութեամբ և դրութեամբ ազնուապետական՝ կ՚ջանայ ցոյց տալ Մածծինիի քննադատութեան ենթակայ եղող գործովն իր հայրենեաց ազնիւ պատճառներն, և անոր անպետքն ու միապետական դրութեան մէջ կ՚փնտռէ անոր փրկութիւնը։ Երևելին Մածծինի, այս անձանձիր յեղափոխականն՝ որ երեսուն տարի գրչով ու զէնքով Իտալիոյ ազատութեան և միութեան համար մաքառեցաւ և իր անուամբ բռնակալաց ահ ու սարսափ ազդեց, Պ. Ռէնանի թուիքն իրաւամբ թերի կ՚գտնէ, և Գրանսայի անկման շարժառիթն անկրօնութեան և անբարոյականութեան կ՚վերագրէ։ Այս քննադատական յօդուածը տեղ տեղ համառօտելով հրատարակելու յորդորուեցանք, նախ՝ ցոյց տալու համար որ Մածծինի՝ ինչպէս որ ժէզվիդները կ՚նկարագրեն՝ արիւնռուշտ և դահակալներու կենաց՝ գաշոյն՝ ի ձեռին՝ սպառնացող մարդասպան մը չէր, այլ հանրավարական սկզբանց և ժողովրդեան իրաւանց ջերմ պաշտպան մը. երկրորդ՝ անոր համար որ այս յօդուածն ոչ միայն Գրանսայի այլ ամէն վերակենդանութեան կարօտ ազգի համար կարեւորութիւն ունի, հեռաւորապէս և հայոց. երրորդ՝ ամէն լուսաւորութիւն և ազատութիւն Գրանսայէն սպասողները պիտի տեսնեն որ այսօր ինչ բարոյական ծանր վիրօք կ՚տառապի այս երկիրն։

*La Reforme intellectuelle et morale, par ERNEST RENAN.

Ս.

«Նիւթին կարեւորութիւնն ու հեղինակին անունը յորդորեցին զիս բանալ այս գիրքը (Մտաւորական և բարոյական վերաշինութիւն) լիատենչ յուսով, բայց միտքս վիատութեամբ եւ վշտակիր Թողուց Քրանսայի համար: Սրդարեւ, ո՞րչափ կարօտ է Քրանսա բարոյական վերաշինութեան: Ազգ մը որ անտարբերութեան եւ աւերասիրութեան (vandalism) մէջ կ'տատանի, այնպէս որ մէկ կողմէ իր երկրին բաժանման անհոգս կ'նայի, եւ միւս կողմէ հասարակապետական հաւատոյ սրբութիւնն ատելութեան եւ վրէժխնդրութեան կրից կ'փոխէ, կենաց երկնային նպատակն Նիւթական հաճոյից պաշտաման մէջ որոնելով — այսպիսի ազգ մ'ի սպառ կորսուած է, եթէ անհնարին ճիգ մ'ընելով չսթափի, վերին խորհրդոց շրջանին մէջ չմտնէ, պարտուց եւ զոհողութեան սկզբունքը չընդունի եւ իր բոլոր զաւակունքն 'ի սէր եւ գործոց միակցութեան չկոչէ:

Այս մղումն, այս կենսատու շարժումն Քրանսայի վեհագոյն հանճարներէ պարտէր ծագիլ, այն գրագէտներէն որ կարող են չարեաց պատճառները ըմբռնել, նոյնպէս ազգային աւանդութեան ցոյց տուած դարմանները, եթէ եւրոպական ընդհանուր ձկտման համեմատ ընեն եւ դաշնաւորեն մեր գուշակած ապագային նկատողութեամբ: Այսպիսի գրագէտներ առատ են 'ի Քրանսա, եւ ասոնց մէջ Թրնան՝ գիտուն եւ ազդեցիկ խորհող մը, առաջին կարգը կ'բռնէ: Ուստի իրաւամբ կ'յուսայի տեսնել իր Մտաւորական և բարոյական վերաշինութիւնն գործին մէջ, Թէ որո՞նք են այն պատճառներն որ 1815էն 'ի վեր Քրանսայի յառաջադիմութեան վախճան տուին, Թէ ի՞նչ կերպով կարելի էր ազգային կենաց վերածնունդ տալ, եւ միանգամայն սրտագին յորդոր մը տեսնել իրեն վաստակակից բանուորներուն՝ ստիպելով որ բարոյական խաչակրութիւն մը կազմեն, որով Թերեւս կարելի լինէր Քրանսայի՝ իր կորուած նախաշարժման զօրութիւնը վերստին ստանալ եւ յառաջադիմութեան գլուխն անցնիլ: Բոլոր իմ յոյսերս պարապ ելան: Եւ այս առաջին պատրանքս չէ այն գաղղիացւոց համար որ իմացականութեան, գործունէութեան եւ համբաւոյ շնորհիւ՝ յատուկ պաշտօն ունէին հայրենի երկիրն առաջնորդել, որ պարտաւոր էին յառաջ մղել զայն՝ երբ վարանէր, եւ ուղիղ ճամբան վերադարձնել՝ երբ մոլորէր: Վերջին ալէկոծութեան ժամանակ՝ մտաւորապէս քան զընդհանուրն զեր 'ի վեր գտնուող այս անձերուն անզգայութիւնն ու վիատութիւնն համաճարակ էր, եւ այս է իմ ողբացած անկման ամենէն ծանր նշաններէն մին:

Ճշմարիտը՝ զարմանք եւ վիշտ կ'զգայի տեսնելով որ՝ գործունէութեան շրջանին մէջ՝ Լէտրիւ Ռօլէնի, Լուի Պլանի, Էտկար Քինէի, Շէլչէրի, Սրակօի պէս մարդիկ եւ ուրիշ շատեր՝ Բարիզի ապստամբութեան անշարժ հանդիսատես կ'մնային, մինչդեռ՝ եթէ անձնապէս միջամտէին՝ Թերեւս ա-

նոր ազնուազոյն ուղղութիւն մը տալին. այլ ոչ, լոկ եւ անարդիւն կ'վարանէին ժողովի մը մէջ՝ որու հայրենեաց վնասակար լինելը գիտէին, եւ շարժման մը մէջ որ՝ սպիկար նիւթապաշտներու ձեռքը՝ 'ի հարկէ աղէտից ահարկու դուռ մը պիտի բանար:

Իմացականութեան շրջանին մէջ՝ Քրանսայի լուսազոյն գլուխներն վհատ ու մունջ կ'մնան; Գինէի Նման, Քրանսայի նախագործ գերի խանութիւնն ու մեծութիւնը գովելով կ'յամառին, Հիւսքի Նման, կամ Ներկային աղէտից դարմանն անցելոյն մէջ կ'վնտռեն, Ռընանի Նման: Եւ ոչ մին արիութիւն ունի յայտնելու Քրանսայի թէ իր անկումը բերող սխալանքն ի՞նչ են. ոչ ոք կ'իշխէ անոր ցոյց տալ, ամէն կուսակցական եւ աղանդական ոգիէ ազատ, այլ ապագային վրայ հաստատ հաւատով, թէ ի՞նչ միջոցներ կան անցելոյն մնապարծութիւնը թոթուել եւ այնպիսի հիմնական եւ արգասաւոր կենաց վերածնիլ որ Եւրոպայի կենաց եւ ճակատագրին հետ եղբայրական եւ դաշնաւոր լինի:

Տանդէ այս արիութիւնն ունեցաւ Ռուսլացւոց համար:»

Հեղինակն այս ներածական խորհրդածութիւններն ընելէն ետեւ՝ կ'ըսէ թէ ամենուրեք եւ մանաւանդ 'ի Քրանսա, լոկ մարդու մը կամ խումբ մը մարդոց վրայ ամբողջ ժողովրդեան մը սխալանքը կամ տառապանքը բեռնաւորելու սովորութիւնը դժնդակ է. վասն զի կամ շողոմարարութեան կ'տանի այն կամ թմրութեան, թէ կայսերական անուններ, արքայական աւելորդապաշտութիւններ զուեհիկ կամ դիւցազնական դիպուածներ են ազգի մը պատմութեան մէջ, հետեւանք են, այլ ոչ պատճառներ, թէ ինքն ոչ անհատներու յատուկ սխալմունքը թեթեւցընել կ'ուզէ եւ ոչ այն ահագին պատասխանատուութիւնն որ իշխանութիւն ու հարստութիւն շահելու համար ժողովրդեան մոլութիւններն 'ի վաճառ հանողներու վրայ կ'ծանրանայ. թէ չարքեաց ազբիւրն աւելի խորն է եւ բանսարկուն ներս կ'մտնէ միայն երբ արդէն խրամատ մը բացուած է: Իսկ երբ ազգ մը տասնհինգ կամ քսան տարին անգամ մ'իր իշխողները կ'փոխէ, դարու մ'երկու երրորդ մասը տատանեալ կ'անցընէ, մերթ ելնելով մերթ ընկնելով՝ նոյն շրջանին մէջ, անդադար յառաջադիմութեան կ'տենչայ, այլ անկարող կ'գտնուի նոյն շաւղին մէջ քայլ մ'անգամ առնլու, ըսել է թէ չարիքն անոր ծուծն անցեր է: Պէտք է զայն վեր հանել, բացատրել եւ արմատէն խլել, առանց գովեստի կամ պարսաւի: Քրանսայի մէջ այսպիսի փորձ մ'ընելու նշանները չեն երեւիր, եւ ոչ այլուր . . . : Եւ ապա կ'յաւելու.

«Երեսունուն տարի կայ երբ առաջին անգամ իմ համոզումս հրատարակեցի՝ թէ Քրանսայի ու Եւրոպայի հանրավարական (democratic) շարժման ընութիւնն ու ընթացքն այլայլած եւ յապաղած են երկու հիմնական, կենսական սխալմամբ. առաջինն, որ արմատ ծգած է բոլոր Եւրոպա եւ հաստատապէս իմ յատուկ հայրենեաց մէջ, սա կարծիքն է թէ՝ քաղաքակրթութեան շարժման գլխաւորութիւնն Քրանսայի յարատեւ եւ գրեթէ անբռնաբարելի ժառանգութիւնն է, երկրորդ՝ սա համոզումն՝ զոր Քրանսայի զոր-

ծոլ մասը կուրօրէն ընդունած է, թէ՝ 1789ի յեղափոխութիւնն նոր թուական մը բացած է, եւ թէ հետեւապէս ներկայ ժամանակիս գործը պարզապէս այն յեղափոխութեան սկզբանց իրական արդիւնքն է: Այս սխալանաց առաջնոյն վրայ ստէպ խօսած եմ, երկրորդն Քրանսայի արդի վիճակին բանալին է, եւ Ընթերցողին այս գիրքը կ'ստիպէ գիս անոր վրայ ուշադրութիւն հրաւիրելու:

Այն յեղափոխութեան թէ նշանաւոր գործոց եւ թէ օրէնսդրական երեւելի յայտարարութեանց վրայ տիրապետող բաղաքական տեսութիւնն եղաւ, Բրաւանց Տեսութիւնը. անոր բարոգած եւ նուիրագործած բարոյական վարդապետութիւնն եղաւ՝ նիւթական վարդապետութիւնն՝ որ կեանքը սահմանած էր իբրեւ Երկրիս վրայ երջանկութեան Հետամուտ: Առաջինն Յոգեն Ազնուութիւնն հռչակեց, երկրորդն Շահուց վնասակարութիւնը հռչակեց: Այսպէսով շատին վրայ ծգուած մէկ քանի կայծեր անհատներու կողմէ՝ որ՝ այլ գաղափարներու եւ այլ նպատակներու մարգարէներ կամ մարտիրոսներ մեռան, 'ի համար չեն առնուիր (որ եւ է մեծ յեղափոխութիւն մ'առանց այսպիսի կայծեր արձակելու չանցնիր) եւ յեղափոխութեան հիմնական բնութիւնն մեր համառօտ կերպով բացուն է. Քրանսա զայն իրեն յատկացուց, չփոխեց զայն երբէք երբ բուռն յուզմանց բանակալութիւնն յաջորդեց. իր նոր պարտութեան ատեն ալ զայն փոխելու տրամադրութիւն մը չցուցուց:

Գեամութեան տրամաբանութիւնն իմացողներուն ակներեւ են ասոր հետեւանքը, քանի որ ամէն ընդունուած սկզբունք դրութեան մը ծնունդ կը տայ: Ընկերութեան տարբեր անհատներու կամ տարբեր դասերու իրաւունքն, որ ոչ իրական զոհողութեամբ սրբացած եւ ոչ նախախնամական բարոյական օրէնքաց հաւատով ուղղուած եւ դաշնաւորուած կ'զանուին, վաղ կամ անագան 'ի պայքար պիտի գան եւ իրարու պիտի բախին. եւ ամէն անգամուն որ սոյնպիսի իրաւունք հաստատելու փորձ փորձուի՝ պատերազմի եւ ատելութեան կերպարան մը պիտի զգենու: Եւ 'ի չգոյէ պարտաւորութեան օրէնքի մ'որ գեր 'ի վեր է բան ամէն իրաւունք, եւ որոց ամէնքը կրնան կոչում ընել, մարդիկը կ'առաջնորդէ աստիճանաբար եւ անզգայաբար հաստատուած իրաւունքներն ընդունելու. յաջողութիւնը հետզհետէ իբրեւ օրինականութեան նշանակ կ'համարուի եւ մարդիկ ճշմարտին պաշտամունքը կ'թողուն եւ ներկան կ'պաշտեն, տրամադրութիւն մ'որ քիչ ժամանակէն Ջօրութեան պաշտաման կ'վերածուի: Ջօրութիւնն աստիճանաբար կ'ընդունուի եւ ցանկալի կ'դառնայ, մինչեւ անգամ այն անձանց կողմէ որ արդարութեան եւ ճշմարտութեան նուիրական անունները կ'կոչեն իրրեւ իրենց արարմանց գլխաւոր միջոցները: Այսպէսով պահպանութիւնն բռնաւորութեան գլուխ կ'ելնուն, յեղափոխութիւնը Թէն—Ժուստի եւ Թոսպէսբիէրի հետ կ'մարմնանայ, եւ սարսափ՝ դրութեան վերածուելով, ազնիւ առաքելութեան մը տիտղոսը կ'առնու:

Ինքնոր յեղափոխութիւն՝ յաջողակ գինուորի մը ձեռօք, կամ նենգամիտ իշխանի մը խաղաղասիրական Թաքիւվէլութեամբը դադարելով՝ իրաց նոր

կարգի մը տեղի կ'տայ, այս տեսակ քաղաքական վարդապետութեամբ դատապարտուած ազգեր կ'պահպանեն զանոնք իբրեւ իրենց կառավարութեան ուղիղ ոգին եւ Ռօրութիւնը վարչական կեդրոնացման կ'փոխանցեն, այսինքն հասարակային կենաց մենաշնորհն պետութեան կ'յանձնեն որպէս զի անշարժութենէ իրական գործունէութեան նկրտող ամէն փորձ ճնշէ: Եւ այն պահուն մարդոց սրտին մէջ եսականութեան սերմեր կ'ցանեն՝ կենաց սա սուտ սահմանը տալով թէ երջանկութեան խուզարկութիւն է այն ընտիր զգացումներն որ եռանդուն երիտասարդութեան կամ ընդհանուր բուռն վրդովման ժամանակ անհատական եւ հաւաքական շահու մէջ հանրական բարօրութիւն եւ յարատեւ ներդաշնակութիւն հաստատելու ոգի տեսիլներ ներշնչեր էին, հանդարտ ժամանակներ գալով՝ կ'նուազին արբուն հասակի պաղ հաշիւներէն կամ ներկայի իրական աղէտից տեսքէն, քանի որ պարտաւորութիւն հրամայող հաւատն անհետ եղած է:

Անոնք որ ժողովրդեան հետ ժամանակաւոր եղբայրակցութեամբ յաջողած են իրենց ուզածը ստանալ, իրենց խոստումներն եւ համերաշխութեան ուխտը կ'մոռնան, եւ իրենց իրաւանց հանդարտ վայելմամբը կ'շատանան, Ժողովով որ ժողովուրդն՝ եթէ կարող է, եւ որպէս որ կարող է, իր իրաւունքին տիրանայ: Դիւթական շահերն ամէն իրաց միջնորդները կ'կանգնին. հարստութիւնք եւ իշխանութիւն ազգին մարմին մէջ համանշանակ կ'դառնան մեծութեան հետ: Ազգային քաղաքականութիւնն պարզապէս անվստահութեան, նախանձու եւ երկպառակութեան քաղաքականութիւն մը կ'դառնայ անոնց մէջ որ կ'տառապին եւ անոնց մէջ՝ որ կ'վայելեն, անոնց մէջ որ կարող են իրենց ազատութենէ օգուտ քաղել եւ անոնց որ ազատութեան լոկ ունայն անունն ունին:»

Հեղինակն այնուհետեւ կ'բացատրէ թէ ինչպէս իրաց այս վիճակին մէջ միջազգային քաղաքականութիւն ամէն արդարութեան օրէնք առ ոտն կ'կոխէ լոկ եսականութեան եւ տիրապետութեան քաղաքականութիւն կ'դառնայ . . . ինչպէս իմացականութիւնն մեղքն ու մոլութիւնը կ'զարդարէ, իմաստակութեամբ եւ անտարբերութիւն կամ համբ հայեցողութիւն կ'ուսցընէ փիլիսոփայութեան մէջ, ինչպէս մարդիկն միայն արուեստից փայլը պաշտելու կ'յորդորէ եւ ապուշ հպատակութեան կամ վայրագ ապստամբութեան կ'մղէ քաղաքական խնդրոց մասին. բայց յանցանաց՝ ուշ կամ կանուխ, առաւել կամ նուազ ծանր կ'յաջորդէ անվրէպ բաւումն: Այս բաւումն սկսաւ Ֆրանսայի համար երբ ներկան խորտակելով ապագային մէջ մտնելու անկարելիութիւնը տեսաւ: Լոկ այժմ աւելի վտանգաւոր դրութեան մը պիտի դիմէ, եթէ Ֆրանսայի խորհող մարդիկ՝ որ ճշմարիտ եւ արիական հայրենասիրութիւն ունին՝ իրենց հայրենակցաց ճշմարտութիւնը բացէ 'ի բաց կ'յայտնեն: Եւ ապա հեղինակը կ'շարունակէ.

«Ճշմարտութիւնն այս է — իրաւանց տեսութիւնն կրնայ բռնական կամ խարխուլ ընկերութիւն մը կործանել, բայց անկարող է յարատեւ հիման վրայ նոր մը հաստատել: Եոչ վեհապետութիւնն լոկ ինքնիշխանութիւն կամ

ունիշխանութիւն կրնայ ստեղծել. ազատութիւնն բարոյն հասնելու միջոց մի է, նպատակը չէ:

Հաւասարութիւնն՝ իր նիւթական բացարձակ առմամբ բնութեան անկարելի բացասութիւնն է. եթէ զայն գտնել իսկ կարելի լինէր, մի միայն անշարժութեան պիտի առաջնորդէր: Բարեկազմ ընկերական դրութեան մը գաղտնիքը քուէարկութեան միջոցաւ չկրնար երեւան գալ, թէ մէկ մարդու, թէ սակաւուց, թէ ամբողջ ժողովրդեան մը կամաց համեմատ գործադրուի այն, եթէ քուէն բարոյական տիրող սկզբունքի բացատրութիւնն չէ. սկզբունք մ'որ ազգին կրօնական եւ պատմական աւանդութիւնն այնպէս դաշնաւորէ անհատական գիտակցութեան հետ որ ժամանակին հրահանգիչ ոգին դառնայ, երբ նոյնն ժողովրդեան կողմէ մեկնուի եւ 'ի գործ դրուի: Ժողովուրդն որչափ որ ընդարձակ լինի կոտորակ մը չէ, այլ ամէն անհատից եւ դասերու լրութենէն որ կ'միանան ազգ մը կազմելու՝ մի եւ նոյն յատուկ հաւատոյ, նոյն դաշնադրութեան ներքեւ, եւ նոյն նպատակի դիմող. այս նպատակն է միակ վեհապետը:

Յեղափոխութիւնն այն ատեն միայն նուիրական է եւ օրինաւոր երբ յառաջադիմութեան շաւղին մէջ յանուն նոր նպատակի մը կ'ծեռնարկուի, եւ կ'յաջողի բոլոր ժողովրդեան բարոյական, մտային եւ նիւթական վիճակը բարւոքել: Իսկ այն յեղափոխութիւններն որոց կ'ծեռնարկուին միայն ժողովրդեան մէկ մասին գերիշխանութիւնն 'ի վնաս միւս մասին հաստատելու համար՝ լոկ վտարանչութիւններ են վտանգաւոր եւ ապարդիւն:

Ամէն ճշմարիտ յեղափոխութիւն հնոյն տեղ նոր դաստիարակութեան խնդիր մը կ'բերէ: Ճշմարիտ կառավարութիւնն է ժողովրդեան մ'իմացականութիւնն եւ ուղիղ դատողութիւնն՝ որ նոր դաստիարակական խնդիրն 'ի գործ դնելու պաշտօն ունի: Պէտք է այնպէս իմն կազմաւորել կառավարութիւնն որ պարտաւոր եւ միանգամայն կարող լինի այս սկզբունքին ճշմարիտ թարգմանը դառնալ, եւ զայն խանգարելու ոչ փորձութիւնն ունենայ եւ ոչ իշխանութիւնը. բայց կառավարական ամէն դրութիւններն՝ որ անվստահութեան, կասկածի, դիմադրութեան, ինքնազատութեան, կամ տիրող ու տիրելոյն մէջ եղած հակառակութեան վրայ հիմնեալ է, փոխանցական դրութեան մէջ կ'սեպուին, եւ թէեւ այս վեհանձն ու ժամանակաւոր բողոք մ'է իրաց անքնական վիճակին դէմ, բայց անզօր է ազգային արգասաւոր կեանք մը կազմել:

Իշխանութիւնը նուիրական է՝ երբ ոչ մեռեալ իշխանութեան մը դիակն է եւ ոչ ասոր անունը զրաւող սատանին մը, այլ պաշտօն ունի եւ կարող է ժամանակին բարոյական սկզբունքը ներկայացընել եւ զարգացընել. եւ այս՝ աշխարհիս յաւիտենական խնդիրն է — ոչ թէ իշխանութեան կործանումն, այլ սուտ ու մարած իշխանութեանց տեղ նոր իշխանութեան մը հետազօտութիւնն ու հաստատութիւնը: Ոչ ինչ չկործանիր, ոչ ինչ չստեղծուիր, այլ՝ մեր հասած կամ հասնելիք դաստիարակութեան վիճակին համեմատ՝ ամէն բան կ'այլայլի:

Դատիարակութիւն, հայրենիք, ազատութիւն, ընկերակցութիւն, ընտանիք, սեպհականութիւն եւ կրօն — ամէն ատոնք մարդկային բնութեան անկորնչելի տարերքն են. կարելի չէ կործանել զանոնք, բայց ամէն թուական իրաւունք եւ պարտք ունի անոնց զարգացման հոգ տանիլ ժամանակին իմացողութեան, գիտութեան յառաջադիմութեան եւ մարդկային յարաբերութեանց փոփոխեալ վիճակին համեմատ: Ցատի հանրավարութիւնն՝ այս գաղափարներով լուսաւորուած՝ պէտք է որ բացատութեանց շաւիղը թողու. օգտակար եւ պատեհ էր այն որչափ ատեն որ մեր պարտքն էր մարդկային ազգն անցելոյն կապող շղթաները խորտակել, անօգուտ եւ անբերրի է այժմ որ մեր պաշտօնն է ապագային տիրանալ: Թէ այս ճամբան չթողու, 'ի կորուստ պիտի մատնէ ինքզինքն, ինչպէս ամէն յետադիմութիւն պիտի կորսուի, անիշխանութեան կամ անբաւականութեան մէջ:

Կեանքն բարօրութեան խուզարկութիւնը չէ, երջանկութիւն մ'որ երկրիս վրայ անկարելի է: Կեանքն առաքելութիւն մ'է, ապա թէ ոչ չունի արժէք եւ ոչ նշանակութիւն: Կեանքն մերը չէ այլ Աստուծոյն է, հետեւապէս նպատակ մը, օրէնք մ'ունի: Այս օրէնքը գտնել, հետզհետէ այս նպատակը ստուգել եւ մեր մտածմունքն ու գործերն ըստ այնմ կարգաւորելն է մեր պաշտօնը: Պարտաւորութեան սրբանուէր նշանն պէտք է որ տիրապետէ կենաց: Մարդս բնութենէ իրաւունք մը չունի, բայց եթէ մէկ իրաւունք մ'որ է իր պարտեաց կատարման ամէն խոչընդոտն եղող բաներէն ինքզինքն ազատագրել: Մեր բոլոր իրաւունքն պարզապէս մեր յատուկ գործոց, այս է մեր պարտեաց հետեւանքն են: Դիւթական նոյնպէս մտաւորական ստացուածք մի միայն այս պարտիքը կատարելու միջոցներ են, գործիներ են որով մեր առաքելութիւնը կ'կատարենք, այսինքն նպատակը . . . :

Ինչ որ լինի օրէնքն, ինչ նպատակ որ մեզի սահմանուած լինի, որոց վրայ ատեն ատեն որոշ նշոյլներ կ'նշմարենք, չենք կարող ոչ առաջինը գտնել, ոչ երկրորդին համեմատ՝ առանց բոլոր մարդկութեան ոյժերն յայն մղելու: Հետեւապէս մեր նմաններու հետ մեր սերտ միութիւնը պարտիք մ'է: Անձնիւր կ'ապրի՝ չէ թէ իր անձին համար, այլ ամենուն համար. եւ մենք չենք կարող զարգանալ միւսներէն հեռու: Գերագոյն պարտիքն է զոհողութիւնը. գործել, եւ 'ի հարկին տառապիլ՝ չէ թէ մեր անձին այլ ուրիշներուն համար, բարոյն յաղթանակին համար ընդդէմ չարին . . . :

Քրանսա կենաց այս պայմանները մոռցաւ. թողուց նիւթականութեան ծոցն իր ազնիւ միտումները, մարդկութեան համար բնածին սէրն՝ իր յատուկ իշխանութեան երկրպագութեան մէջ վնատեց, իտէականին խանդն՝ վատթար ցանկութեանց զոհեց, առ ապագայն տենչանքն՝ յեղափոխութեան մը կոյր եւ անափառական երկրպագութեան, որ լոկ անցելոյն մէկ թուականն աւարտեց, իր սէրն առ հայրենատենչ ազգս եւ իր հաւատն անոնց հաւասարութեան մասին՝ բարոյական տիրապետութեան երազին եւ գլխաւորութեան մենավաճառութեան վերածեց, զոր եւ ոչ ազգի մը կրնայ տրուիլ: Իր արդի աղէտից արժանի եղաւ. ժողովրդոց ըրած անկատար խոստումներուն բա-

ումն է, իր կողմէ Լեհաստանի լրումն, 1823 Սպանիա արշաւանքն, այն այլ եւ այլ դասերու ատելութիւնն որ իր ժողովրդեան մէջ հասարակապետական առաքելութեան տեղն անցաւ, երկրորդ կայսրութիւնն ստիպաբար ընդունիլ, Հռոմի, Մէքսիկոյի, Հիսպանիի եւ վերջին պատերազմին քաւումն:

Քրանսա ինքզինքն ազատելու համար պէտք է որ վերջին յիսունհինգ տարին 'ի բաց թողու եւ հիմնական նոր ճամբու մը մէջ մտնէ:

ԱՌ ԻՄ ՍԻՐՈՒ

Ի՞նչ փայթ են ինձի արտուտ կամ սոխակ,
Անյայտ ջուրց մրմունջ, մեղուաց սուր բզզանք
Որ միջօրէին ընդ կակաչ դառնատ
Դեղերին ուշիկ, ի՞նչ, դաշնաւոր ձայն,
Քնար ու դեղջն, կամ երկնաշունչ խաղ
Կլուք ու Մօղարի, ի՞նչ փայթ ինձ ասանք,
Երբ կարեմ լսել քու ձայնդ դողտրիկ:
Ի՞նչ հոգրս են իմ լուսին ու աստղունք:
Գիշերուան երկինք, երբ հովէն պարզեալ,
Բեկբեկ կը փայլին ընդ լեռնամ ճակ,
Մթին ու հեղիկ, աղօր են իրաւ.
Աղօր է իրաւ տեսնել նոր լուսին
Եւ կարի անուշ, բայց թէև չքնաղ,
Կը մարին 'ի սպառ երբ նայիմ աչացդ:
Ի՞նչ է ինձ համար այս աշխարհիս դեղ —
Արեւմտեայ փայլ, դեղաշուք այգուց
Մարգարիտ երանգ. յուզեալ կամ հեղ ծով.
Աշնադէմ նշոյլք, մեղմ շաւ ալիքներ
Որ հիւսեալ թփոց վրայ կը սիրին
Դալարի լուսով. օր աւետաբեր
Գարնան — թէ միայն դէմքդ առ իս դառնայ:

Էլիզ Գոնէր:

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱՅԻ ներքին գործերը մեծ կարևորութիւն մը չունին այս միջոցին։ Իր ազգային ժողովն տեսակ մը անշարժ ջրերու կ'նմանի որ հետզհետէ մօրուա կ'դառնան։ Մաք-Մահօն կ'տիրապետէ, Պրոկլի կ'իշխէ, քսանի չափ դաւառներ պաշարման վիճակի մէջ են, մամուլը կ'հեծեծէ, կղերը գաղանի կ'մեքենայէ, բայց ժողովուրդն՝ ըստ երևոյթին՝ կ'հսկէ, և մասնական ընտրութեանց առթիւ՝ Լէտրու-Ռօլէնի և Լըբիդիի պէս հասարակապետականներ ազգային ժողովին երեսփոխան ընտրելով՝ իր տրամադրութիւնն ու հակումն հասարակապետութեան համար կ'յայտնէ։ Սակայն մեծամասնութիւնը միապետական է, սակայն Երեսնից Ցանձնաժողովն ընտրական իրաւունքը սեղմելու կ'աշխատի, սակայն ձախակողմեանք՝ որոց պարագլուխներն են Թիէր, Կանպէդա և Լէտրու Ռօլէն, անդօր են կառավարութեան յետադիմական գործառնութեանց դիմադրել, և Պոնապարդեանք, կայսերական իշխանին, և ինչպէս գաղղիական լրագիր մը կ'ըսէ, Սէրանի Ֆառանֆորդին ութեւտասնամեայ տարեդարձը տօնելու առթիւ վերստին կը խլրտին, մինչև անգամ կէսյոյէ Նափոլէօն ձայներ Բարիզի մէջ կը լսուին, մինչդեռ միւս կողմէ Քառասուն անմահէց կամառն՝ Ակադեմիան՝ Էմիլ Օլիվիէն, որ Լամարտինի տեղ ընտրած էր 1870ին, իր ընդունելութեան ճառին մէջ՝ Նափոլէօն Գ.ի վրայ քանի մը դոմենսներ գրելուն համար՝ կ'մերժէ, բայց 'ի վերջէ կ'ընդունի։ Նափոլէօնի այս վերջին պաշտօնեայն որ մեծ ժողովրդականութիւն կ'վայելէր, որ ՌԷՆԻ սրտով Բրուսիոյ դէմ պատերազմ հրատարակեց, և ասպա Իտալիա քաշուելու առանձին տպրելու, այսօր ժողովրդեան ատելութիւնը կ'գրգռէ։ ԱՆԿԼԻՈՅ նոր դահլիճը կ'կազմուի, և ժողովրդեան վստահութիւնն առ այժմ կ'վայելէ. Կլատսդրն կ'ընդունի ընդդիմադիր կողման պարագլուխը լինիլ. Էտիմպուրկի դուքսն ու դքսուհին Անկլիա կ'դառնան և այս առթիւ շքեղ հանդէսներ տեղի կ'ունենան։ Բարլմենդը կ'բացուի։ Աշանդեան կուիր վերջ կ'առնու. անկլիական զօրքը Հայրենիք կ'դառնայ մեծաւ մասամբ։ Կարնէդ Վ.օլսլէյ զօրապետն Աշանդայոց Գումասի մայրաքաղաքն առնլէն ետև՝

կ'այրէ, դաշնադրութիւն մը կ'առաջարկէ՝ սա պայմանաւ որ Աշանդաց-ցիք Անկլիոյ հետ միշտ հաշտ մնան, պատերազմի որոշեալ տուգանք մը վճարեն, մնացեալ իշխաններուն վրայ չբռնանան և 'ի վերջէ անկ-լիացւոց առևտրական յարաբերութեանց դէմ արգելք չհանեն։ Այս պատերազմին մէջ անկլիացիք միայն 16 սպաննուած և 368 վիրաւո-րուած սպաներ և զինուորներ կ'ունենան։ Հնդկաստանի սոնձ Անկլիոյ ուշադրութիւնը կ'գրաւէ. արդէն անոր առաջն առնելու կամ դէթ վնասը թեթևցնելու համար օգնութիւն և նպաստ կ'հայթայթուին։ ԳԵՐՄԱՆԻՈՅ կայսերական բարձրագոյն զինուորական և մամլոյ օրէն-քով կ'զբաղի, երկու իրարու հակադէմ խնդիրներ։ Պիսմարգի հիան-դութեան լուրեր ստէպ կ'լսուին, նոյնպէս Կայսեր։ Երևելի քաղաքա-գէտին հետ Պ. Հէր Վ. ն ծօքէ, հունգարացի նշանաւոր քերթող մը տեսակցելով՝ խիստ հետաքրքրաշարժ կերպով կ'նկարագրէ այս երկուքի մարդն իր տան մէջ։ Վէց ոտնաչափ է հասակը, Պիսմարգ իշխանի բո-լորտիքն ամէն ինչ վիթխարի է, իր մատիտներէն սկսեալ, որ գաւա-զանի տեղ կրնան ծառայել, մինչև իր Ս. Պերնարի շունն որ իր նստա-բանին ներև կ'երևի ահարկու։ Իր սենեակը մերկ և պարզօրէն կա-հեալէ, իր կարասին՝ ըստ մեծի մասին երկաթեայ լինելով՝ իր կամայ պէս։ Երկաթէ արդ մ'ունի որ կ'երևի թէ դաղտնի դաշնագիրներու և գլանիկներու պահարանն է, երկաթէ մահիճ մ'որու վրայ կ'հանգչի, եթէ հանգչիլ գիտէ, ահագին սեղան մը և քանի մ'աթոռներ։ Պիս-մարգ իշխանն մտերմօրէն կ'ընդունի այցելու բանաստեղծն, և ասոր գիտողութեան վրայ՝ բայց 'ի բաց կ'ժխտէ թէ Գերմանիա դիտաւո-րութիւն մ'ունենայ ուրիշ երկիրներ իրենին կցելու, և ոչխակ մատիտի չափ տեղ մը. (նոյն պահուն Հէր Ծօքէ կ'մտածէ թէ Պիսմարգի մա-տիտն Պէհեմիոյ սահմանէն մինչև Թրիէստ կրնայ հասնիլ, անշուշտ աշխարհացոյց տախտակի վրայ) Աւստրիոյ նկատմամբ՝ Պիսմարգ կ'ըսէ թէ՝ Եւրոպայի խաղաղութեան համար անոր կեդրոնն ամուր պետու-թիւն մը կարևոր է, Աւստրօ-Հունգարական պետութեան պէս, և թէ այն պաշտօնեայն որ մաս մը գրաւելու ելաւ «արժանի եղաւ յաղ-թահար լինելու»։ Այնուհետև Ֆրանսայի և Ֆրանսացւոյ վրայ քանի մը ծանր դիտողութիւններ ընելէն ետև կ'ըսէ. «Բերթէ բարիգցի խոհարար մը, դերձակ մը կամ վարսավիրայ մը և կարմիր հնդկացի մը պիտի գտնես» այս կարծիքն Նափոլէօն առաջնոյն սա բացատրու-թենէ առած պիտի լինի. Ռուս մը քերթէ և քօղակ մը պիտի գտնես։ Յետոյ կ'ծիծաղի այն կարծիքին վրայ թէ Ռուսիոյ գերմանական գա-

ռաները կ'ուզէր կցել, քանի որ ռուսցիայ պերմանացիք բոլորովին անօգուտ են պետութեան, և հուսկ ուրեմն կ'խօսի Պապին դէմ, որու համար կ'ըսէ թէ՝ այն է միայն վտանգաւոր մարդն Եւրոպայի խաղաղութեան համար։ ՍՊԱՆԻԱ իր բոլոր այժը կ'ժողովէ Գարլոսեանց վերջին հարուած մը տալու, որոնք հեղհեղէ զօրանալով բաւական ուժեղ Ճակատ մը կ'ցուցնեն Պիլսաս քաղքին շուրջը։ Տօն Գարլոս՝ սոյն քաղքին օգնութեան եկող Մորիսնէս զօրապետը նահանջելու կ'ստիպէ, Բիլէրա զօրապետան ալ կ'վիրաւորի։ Մորիսնէս իսկոյն Մատրիտէն օգնութիւն կ'խնդրէ. մարէշալ Սէրրանս ու ծովակալ Տորէդ՝ կառավարութեան հողը Նաւարայի յանձնելով վտանգին տեղը կ'փութան նոր զօրքով, և կ'հրամայեն որ Արակոնի և այլ տեղուանք գտնուած զօրաղնդեր Պիսդայիա ղրկուին։ Նոյն պահուն Գարլոսեանք ստստիկ կ'ռմբակոծեն Պիլսաս և քաղքին մեծ վնասներ կ'հասցընեն։ Տօն Գարլոս իր բարեկամաց կ'յայտնէ որ Պիլսաս տիրելէն ետև Սպանիոյ թագաւոր պսակուելու միտք ունի, Էլիս զօրապետին պաշտօնէութեամբ նոր կառավարութիւն մը կազմելով և եւրոպական տէրութեանց կոչում ընելով որ իբրև պատերազմող իշխանութիւն Ճանչցուի։ Ահա այսպէս հրոսակաց դունդ մը՝ սպանիացոց մէջ տիրած երկպառակութենէ և մոլեռանդ կղերի մը սատարութեամբ՝ այն աստիճան կ'զօրանայ որ ոչ միայն հասարակապետութեան կ'սպառնայ այլ տէրութեանց հետ բանակցելու կ'մտի։ Սակայն Սէրրանս անփոյթ չէ. 60,000 զօրքով Պիլսաս աղատելու կ'վազէ մինչեւ Տորէդ ծովէն թշնամին պիտի զարնէ։ Գարլոսեանք 40,000 զօրք ունին, կ'ըսուի։ Մինչ յարդ Պիլսաս կ'դիմանայ, և, ինչպէս նախորդ թերթով գրած էինք, առնուած լինելուն լուրը սուտ կ'ելնէ։ Կաստիլս զօրապետն՝ որ պաշարելոյ հրամանատարն է, առատ պաշար ունի և մնագիր է անձնատուր չլինիլ։ ԱՒՍՏՐԻՈՅ մէջ պետութեան և եկեղեցոյ պայքարը կ'շարունակուի։ Նոր եկեղեցական օրինաց կառավարութիւնը կ'ուզէ կրօնական դասուն լուծը թօթափել։ Անդրալեռնականք մեծ տագնապի մէջ են. եպիսկոպոսներն նոր ծրագրին դէմ ամենայն ուժով կռուելու կ'պատրաստուին, մինչեւ Պապը կոնդակ մը կը հանէ՝ դատապարտելով նոր ծրագիրն՝ իբրև գործիք մ'որ հռոմէական եկեղեցին տէրութեան հպատակ ընելու պիտի ծառայէ, թէև կ'խոստովանի որ նոյն օրէնքը բրուսիականին հետ բաղդատելով չափաւոր է։ Պապն Աւստրիոյ Կայսեր ալ դիր դրելով կ'խնդրէ որ եկեղեցին անպոյխ ոորկ-ՆԷՆ մը չենթարկէ, բայց այս անգամ Կայսրն, պաշտօ-

նեայք և ժողովուրդը համաձայն են. Կայսրը պատասխան չդրեր պապական նամակին, առաջին պաշտօնեայն կ'յայտնէ թէ Ա-ոդբէ Հ-ոմ դղեակին վիճակը ղէպի լաւ երթէ և նոր ծրագիրն՝ որ յօդուած առ յօդուած քննուելով խորհրդարանին (բէյշրաթ) մէջ կ'ընդունուի, կղերին մէջ մեծ հերձուած մը հանելու վրայ է։ Վատիկանու մեծ հարուած է Աւստրիոյ այս դիմադրութիւնն, Աւստրիա որ ցարդ պապական դատին հաւատարիմ էր։ Այժմ Ֆրանսա միայն կ'մնայ Հռոմի պաշտպան, բայց Ֆրանսա անզօր և լրագրի մ'ըսածին պէս քեկեաւ եղէջ մ'է վտանգի առեն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ընդհանուր ժողովին մօտենալը. Խառն ժողովը որոշեր է ամսոյս 15-ին Երեսփոխական Ընդհանուր ժողով դումարել։

Խառն ժողովը չորս ամսուան մէջ հաղիւ կրցաւ Ընդհ. ժողով դումարելու որոշումտալ, նայինք այս որոշումը քանի՞ ամսուան մէջ պիտի գործադրէ։

Սահմանադրութեան վերաքննութիւնը լմընցած ըլլալով՝ այս օրերս տպագրութեան պիտի տրուի եղեր որպէս զի ամէն երեսփոխան օր առաջ կարդայ ու ընելիք գիտողութիւնները պատրաստէ։

Օրագրին խօսքին նայելով Սահմանադրութեան մէջ վերաքննելի կէտ մը գտած չեն եղեր, և եթէ այս ճշմարիտ է, ի՞նչ հարկ նորէն տպելու, թող երեսփոխան էֆէնտիք գործադրութեան մէջ գտնուող Սահմանադրութեան վրայ ընեն գիտողութիւններն։

Բայց Օրագրի խօսքին չհաւատայուիր, իբրև թերթ իւր առջի գրածը չհերքելու համար վերաքննելու բան մը կայ կ'ըսէ հրապարակի վրայ, իբրև մարդ իւր խօսածը չհերքելու համար վերաքննելի կէտեր կան կ'ըսէ Ցանձնաժողովոյ մէջ (այս խօսքին մէջ երկդիմի նշանակութիւնը ներելի է) հետևապէս Օրագրոյ համար Սահմանադրութիւնը վերաքննութեան պէտք չունի, իսկ խմբագրին համար ունի։

Փունջ կը լսէ թէ Պատրիարքի ընտրութեան խնդիրն առաջին

խնդիր պիտի ըլլայ, իսկ ես կ'ըսեմ թէ առաջին խնդիրը Տեղապահ Սրբազանին հրաժարականին խնդիրը պիտի ըլլայ։ Ընդհ. ժողովը հիմա երկու խնդիր ունի, մէկ կողմէն ընտրել միւս կողմէն հրաժարեցրնել. այս երկու գործը մէկէն տեսնելը անկարելի ըլլալով մենք կ'առաջարկենք որ պաշտօնները բաժնուին Ընդհ. ժողովին մէջ, երեսփոխանաց կէսը ընտրելու պաշտօնը վարէ կէսն ալ հրաժարեցրնելու։ Ասանկով գործերը արագութիւն կ'առնեն և շաբաթը անգամ մը Պատրիարքը կ'ընտրենք և կը հրաժարեցրնենք։ Եթէ ընտրող կողմը գանգաղ գանուի՝ թողմիւս կողմն իւր պաշտօնը վարէ, այսինքն հրաժարեցրնէ. բայց ընտրուած մէկը չլայ եղեր, թող ընտրուելիքը հրաժարեցրնէ, ինչու պարապ նստի։

Էհ, ընթերցող, երեսփոխանութեան մէկ մասին բրածն ալ արդէն աս է, և իմ բաներս թէև կատակի ձևով՝ բայց ճշմարտութիւններ են։

Ողջմտութիւնը դեռ կը քնանայ . . . յուսահատութիւնը կամայ կամայ կ'արթննայ . . . ։ ՄԵՂՈՒ

— Անկլէոյ Բարլէնդներուն դարձը. Նախորդ բարլմէնդն սկսաւ 1868 դեկտ. 10ին և հետևապէս միայն վեցամեայ շրջան մը լրացուց։ Արդի իշխանութեան օրով բարլմէնդներէն մեծ մասն տարաժամ վախճան մը ունեցան զանազան պատահական պարագաներով։ Երբ Վիկտորիա թագուհին գահն ելաւ, բնականաբար բարլմէնդը նոր գահակալութեան առթիւ յարմարագոյն ժամանակ մը լուծուեցաւ։ Այն ատեն 1837ին ընտրեալ բարլմէնդը 1841ին վերջ առաւ հասարակաց խորհրդարանին մէջ կառավարութեան դէմ անվստահութեան քուէ մը տրուելուն։ 1847ին ընտրուած բարլմէնդը 1852ին լուծուեցաւ, վասն զի նոյն տարին լորտ Տէրպի պաշտօնէութեան դլուխն անցնելով՝ արժան դատեց որ ժողովուրդն ընդհանուր քուէարկութեամբ լորտ Ժ. Ռուսէլի քաղաքականութեան վրայ և առևտրական մեծ խնդրոյն վրայ իւր կարծիքը յայտնէ։ 1852ին կազմուած բարլմէնդը 1857ին լուծուեցաւ, վասն զի լորտ Թալմէրսդրնի պաշտօնէութիւնն խորհրդարանին մէջ իւր մեծամասնութիւնը կորցուց Չինաստանի պատերազմին վրայ պառակտում պատահելով։ 1857ին ընտրուած բարլմէնդը 1859ին վախճան առաւ՝ հասարակաց խորհրդարանին մէջ լորտ Տէրպիի պաշտօնէութեան յաղթուելուն։ 1865ին ընտրուած բարլմէնդը 1868ին լուծուելով՝ ընտրական նոր օրէնքաց առթիւ, արժան դատուեցաւ որ սոյն օրէնքաց համեմատ նոր երեսփոխանութիւն մը կազմուի։

— Միացեալ-Նահանգաց մեջ եկեղեցական ազատութիւն. Վերջի ժամանակներն հրատարակուած վիճակագրութեան նայելով՝ Միացեալ-Նահանգաց այլ և այլ կրօնական մարմիններու ունեցած կալուածոց դումարն է այս կլոր թուով. Մեթոդիստներ՝ լիրա ստերլին 14,500,000, Պապական կաթոլիկ՝ Լ. Ս. 12,700,000, Բողոքող եկեղեցի episkoposական՝ Լ. Ս. 7,600,000, Մկրտողք՝ Լ. Ս. 8,500,000, Լուտերական եկեղեցի՝ Լ. Ս. 3,100,000, Երիցականք՝ Լ. Ս. 11,000,000, Վերանորոգեալ եկեղեցի՝ Լ. Ս. 3,400,000, Միաւորականք՝ Լ. Ս. 1,300,000, Հրէայք՝ Լ. Ս. 1,000,000, Միաբանական մարմինը՝ 5,200,000, Ընդհանրական՝ Լ. Ս. 1,180,000, Քրիստոնեայ՝ Լ. Ս. 1,340,000, Մորմոնք՝ Լ. Ս. 136,000, Ցնցողք՝ Լ. Ս. 18,000, Մորավեանք՝ Լ. Ս. 148,000, Բուդեիստ (այսինքն Դողդողք)՝ Լ. Ս. 820,000: Հետևապէս կրօնական սեպհականութեան ամբողջ գումարը կ'հասնի Լ. Ս. 73,850,000, որ գրեթէ սասնհինգ տարուան մէջ կրկնապատկած է:

— Դոքթր Սդրօ. Այս գերմանացի երևելի զիտնականն, Յիսուսի վարդ գործին հեղինակն, որ անցածներս մեռաւ՝ գրած էր որ իր գերեզմանը գտնեն ՝ Իսկ և Օսիրիս երդելով Մոզարի «Մոգական սրինգէն» ինքը յօրինած էր այս եղանակին խօսքերն. սակայն այս թուղթը թաղուելէն ետև գտնուելուն՝ կարգը կատարել չկրցան:

— Մաղ մը. Անապատի մէկ Արաբացի սեղանակից գտնուելով Ամիրապետի մը, այս վերջինն մաղ մը տեսաւ իր կոչնականին բերանը տարած մէկ պատառին վրայ: «Արաբացի, պոռաց Ամիրապետը, միտիդ վրայ մաղ մը կայ, վերցուր զայն:» Արաբացին ոտք ելաւ մեկնելու համար և ըսաւ. «Սեղան մ'ուր տանուտէրն այդչափ ուշադիր կ'նայի կերակուրներուն որ մաղ մ'անդամ աչքէ չփախցըներ, Իսմայէլի զաւակին յարմար վայր մը չէ:»

— Մարաջախտ լինելու հնար մը. Կրամվելի դուքսն իր ժամանակին ամենէն ճարտիկ և ուշիմ պալատականն էր: Օր մը կարտինալ Մազարէնի դահլիճը մտաւ առանց կանխաւ իմաց տալու: Նոյն պահուն կարտինալը կ'զբօսնուր պատին դէմ ոստոստելով: Այսպիսի մանկական խաղի մ'ատեն առաջին պաշտօնէի մը սենեակն յանկարծ մտնել վտանգաւոր բան մ'էր. եթէ Կրամվեն անճարակ պալատական մը լինէր նեղողութիւն կմկմալով անտարակոյս դուրս կ'ելնէր: Բայց դուքսն խրոխտաբար ներս մտաւ և պոռաց. «Պարոն կարտինալ, ես հարիւր ոսկի դրաւ կ'դնեմ որ քեզնէ բարձր կրնամ ոստնուլ» և դուքսն ու կարտի-

նալն սկսան միասին ցատկել։ Կրամմն նայեցաւ որ քանի մը բթամատ աւելի ցած ոստնու կարտինալէն, և վեց ամիս ետք Ֆրանսայի մարաջախտ եղաւ։

— Բ-ՆԻ ԱՌԱՆՈՒԹԻՒՆ. Օրիորդ մը կ'ստիպուի ծնողացը կողմէ իր ատած մէկ ծերը մարդու հետ նշանուիլ։ Երբ քահանան պսակի արարողութեան ժամանակ կ'հարցնէ հարսին թէ արդեօք կ'հաւանի՞ այն մարդն իրեն ամուսին ընելու, օրիորդը պարզութեամբ կ'պատասխանէ. «Ո՛ տէր հայր, դու առաջին անձն ես որ այս խնդրոյն վրայ իմ կարծիքս կ'հարցրնես։»

— Ա-ՊԱՐԱԳԱՅԻՆ ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ. Պարող մը սպարտայի մ'ըսաւ. «Դու չես կարողերկար ատեն մէկ ոտքի վրայ կենալ ինձի պէս։ — Իրաւ է, պատասխանեց սպարտային, բայց որ և է սաղ կրնայ կենալ։»

— ՀԱՆՐԻ Դ-Ի ՄԷԿ ՊԱՏԱՍԽԱՆԸ. Ֆրանսայի թագաւոր Հանրի Դ. անդամ մը փոքրիկ քաղքէ մ'անցնելու ատեն կ'նայի որ ընտիրները դումարուեր էին իր դալուստը շնորհաւորելու համար։ Նոյն միջոցին որ դլխաւոր դատաւորն տաղտկալի ճառ մը կարդալու սկսեր էր, էշ մը սկսաւ ղռալ. ասոր վրայ թագաւորն կենդանիին դանուած կողմը դառնալով ծանրութեամբ ըսաւ. «Պարոն, կարդը քու կդ չէ տակաւին։»

— ՕՐԻՈՐԴ ՄԸ. Կ'պատմեն թէ Իսահակ Նէվտոն անուանի աստղաբաշխը անդամ մը դիւղը դանուելով հովիւ մը տեսաւ որ խաշինքը կ'արածէր և հարցուց անոր թէ մօտակայ քաղաքն անկից ո՞րչափ հեռու է։ Հովիւը պատասխան տուաւ. «Դրեթէ մղոնի չափ, և յաւելցուց, բայց պէտք է որ արտորաս, թէ ոչ հասնելէն առաջ պիտի թրջուիս։» Նէվտոն ճամբայ ելաւ, օդը պայծառ և աղուոր էր, ուստի հովուին խօսքին ականջ չկախեց մինչև որ անձրևին կաթիլներն սկսան վազել։ Այն ատեն աւելի արտորաց, բայց պանդոկը չհասած բոլորովին թրջուեցաւ։ Այս պարագան իր ուշադրութիւնը դրաւեց, դարձաւ և հովուին հարցուց թէ ի՞նչպէս հասկրցեր էր որ անձրև պիտի դար, քանի որ նշանը չկար։ Հովիւը չուղեց բացատրել դործը։ Նէվտոն անոր ոսկի մը շնորհեց, ասա հինդ և վերջապէս քսան ոսկի ընծայեց։ Հովիւն հաւանելով ըսաւ. «Միթէ կ'տեսնէ՞ս սա սև խոյը։ — Այո՛, պատասխանեց Իսահակ, բայց այդ խնդրոյն հետ ի՞նչ վերաբերութիւն ունի խոյը։ — Պիտի բացատրեմ, ըսաւ հովիւն. ամէն անդամուն որ խոյը պատսպարան կ'փնտռէ, և իր դաւակն ցանկապատին կ'զարնէ, իսկոյն կ'հասկրնամ որ քառորդ ժամէ անձրև պիտի վազի։»

ՍԽԱԼՆԵՐ

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
422	17	մարդկանն	մարդկան
»	29	որ	ուր
459	19	բարբոյս	բարբոյն
460	2	ֆրանք	ֆունթ
498	10	ձեռքն արկաւ	ձեռնարկաւ
501	13	Յուսամ եմ	Յուսով եմ
502	3	գերդաստանը	գերդաստունը
»	10	զոր և	զոր նա
503	24	մարդոց	մարդոյ
542	26	ասել թէ	ասել է թէ
»	30	սուտ	սուրբ
544	3	գործելու	գործերու
545	6	ամերիկեան	Ամերիկայի
»	9	ի՞նչ	ի՞նչ բանի
»	16	պարդասելով	պարտասելով
547	25	այս	այն
548	»	և	նա
549	1	ձեռքն	ձեռքում
»	15	ամերիկացի	անկլիայիք
35	35	որոյ	որոյ
37	9	պարզ	գարշ
39	29	Նկատմունքը	Նկրտմունքը
»	31	կ'խնդրեն	կ'խնդրէին
41	10	որը ա-ելարդ է	
44	1	և շատ	նա շատ
45	10	ասեն թէ	ասես թէ
75	3	մանտկին	մանկտին
79	2	երկու	իբրև

ԳԷՈՐԳ ՈՒԱՇԻՆԳԹՆ

ԺԷ

ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱՌՈՒԱԾ

Ուաշինկթն արդէն չորս տարի խաղաղ կեանքի զուարճութիւնք կը վայելէր գիւղի մէջ, երբ հայրենիքն դարձեալ կոչեց զնա առանձին իմն օգնութիւն մատուցանելու համօրէն ազգին։ Մինութեամբ ձայնից նա ընտրուած էր — Նախագահ Միացեալ Նահանգաց։ — Ուաշինկթն բնաւ չէր հաւատար որ ընդունակ էր հոգալու այս բարձրագոյն պաշտօնի պարտաւորութիւնքը։ «Ինչ որ յաջողեցաւ ինձ որպէս սպարապետի, կ'ըսէր նա, դեռ կարող չէ երաշխաւոր լինել, որ վարչութեան ասպարիզի վրայ ևս ձեռնհաս եմ գործելու ըստ արժանոյն։» Բայց ազգն ուրիշ կարծիք ունէր։ Ուաշինկթնի անթիւ անհամար յայտարարութիւններէն և հրովարտակներէն, զոր արձակած էր պատերազմի ժամանակ, պարզ կ'երևէր որ նա չէ թէ միայն մեծ զօրավար էր, այլև մեծ պետական մարդ։ Եւ յատկապէս այժմ, երբ վերանորոգեալ ազգային սահմանադրութիւնն առաջին փորձին ենթարկուիլ պէտք էր, ամենքն համոզուած էին որ միայն Ուաշինկթնի ճարտար բազուկն ընդունակ էր պետութեան դեկն վարելու։ Ընկերները համոզիչ խօսքերով կ'յորդորէին զնա դարձեալ անդամի զրհել հայրենեաց՝ գիւղական հանգիստը, և նա դանդաղելով կ'յօժարէր։ «Ա՛յսօր — գրուած է նորա յիշատակարանի մէջ 16 ապրիլի 1789 թուականի ներքև — բարեաւ մնաս ատոյի իմ՛ մանաւոր կեանքիս և անային բախտս։ Սիրաս այն ատենանի ճնշեալ է վշտագին թախծալ ու հոգսերով, որ բան մի անդամ չեմ դտներ զոյն բացատրելու։ Կ'հեռանիմ ինձ ուղղեալ հրաւէրին և կ'երթամ Նիւ-Եօրք երկրին ամենայն ինչ լաւութիւն գործելու փափաքով, բայց չեմ կ'արծեր որ կարենամ 'ի լրումն ածել նորա յոյսերը։»

Նորա ճամբորդութիւնը յաղթութեան հանդիսի կ'նմանէր. առանձին իմն շքով պատուեցին զնա մանաւանդ Թրէնթնի բնակիչները, որք այժմ միաբան խնդութեամբ Տելավարի անցին երկրատասանեորդ տարեդարձը կ'տօնէին։ Կամրջի վրայ խորհրդաւոր վերնագրով յաղթա-

նակի կամարներ շինուած էին և սպիտակ շորերով պճնեալ փոքրիկ աղջիկները ճամբու վրայ ծաղիկ ու փունջ կ'ցանէին, և աղգի ընտրեալներ այս ճամբով կ'անցնէր։ Փառաւոր կերպիւ զարդարեալ նաւ մի, որ 'ի նշան տասն և երեք նահանգաց՝ տասն և երեք նաւաստիներէ կ'վարուէր, Նիւ-Եօրքի նաւահանգիստը կ'տանէր զնա։ Աղգի ընդհանուր սէրն ուրախ կ'առնէր զնա, բայց չէր կրնար վանել սրտէն այն տխրութիւնը զոր կ'զգար հանդերձեալ դժուարութիւնքը մտաբերելով, և այս տխրութիւնը յայտնի կ'երևէր նորա վշտահար դէմքէն և բոլոր շարժմունքէն։

Պաշտօնատի ճառին մէջնա կ'ըսէր. «Ձեմ կրնար յանձն առնել իմ նոր պաշտօնս՝ նախ և առաջ ջերմեռանդ աղօթք չմատուցած առ Տէրն ամենայնի, որ աղգաց ժողովներուն կ'հսկէ և իւր նախախնամութեամբ մարդկային հանճարի թերութիւնքը կ'լրացընէ. կ'հայցեմ 'ի նմանէ որ ի ջեցընէ իւր օրհնութիւնը Միացեալ Նահանգներու ժողովրդոց վրայ, որ հովանի լինի գթաբար մեր նոր կառավարութեանը զոր աղգն ինք իրեն տուած է բարեբաստիկ լինելու յուսով, և վերջապէս լոյս շնորհէ պաշտօնաւոր անձանց մտքերուն, որք այս կառավարութեան գործերն հոգալու կոչուած են։ Այնպիսի աղերս մի ուղղելով բարձրագոյն Էին, առ միակ աղբիւրն բարեաց, վստահ եմ որ դուք ևս բովանդակ աղգի հետ ղգացմունքներուս բաժանորդ կ'լինիք։» Ի վերջոյ կ'ըսէր. «Անյեղլի ճշմարտութիւններէն մինն է այս, թէ մարդկային առաքինութիւնն ու բախտը անլուծ յօդերով իրարու հետ կապուած են, թէ մեր երջանկութիւնը մեր պարտքերու մէջ դրուած է և թէ վերջապէս արդար ու մաքուր սկզբունքներով առաջնորդուող քաղաքականութիւնն է որ աղգերու բարօրութիւնը կ'հիմնէ միշտ։ Երկինք երբէք չեն կրնար բախտաւոր շինել զաղգ մի որ կարգի և արդարութեան մշանջենաւոր օրէնքներն առ ոչինչ կ'դնէ. միայն այս առաքինութեանց հետևելով կարելի է մեզ վառ պահել աղատութեան սուրբ հուրն, զոր մեք ևս կոչուած ենք պաշտպանելու այսօր։» Եւ իւր ընկեր Լաֆայէթին կ'դրէր. «Միաբանութիւն, ազնուութիւն, վստահակարութիւն և չափաւորութիւն — աստիկ սոքա են այն միջոցները, որով մարթ է մեզ երջանիկ աղգ դառնալ. երջանկութեան այս շաւիղն այնպէս պարզ և շիտակ է, որպէս լուսոյ ճառագայթը։» Այժմ ևս թոշակ չէր ընդուներ և յոյժ ուրախ էր որ առանց վարձու կարող էր սպաս տանիլ իւր երկրին։

Արքաղան երկիւղածութեամբ իւր պաշտօնի գործերուն ձեռնարկե-

լով՝ այժմ նա դուն կ'գործէր յաղթահարելու առջևն դիզուած անթիւ խոչերն. պատերազմէն 'ի վեր ահագին պարտքեր կ'ծանրանային ազգի վրայ, առևտուրն և արհեստները կենարար ազդեցութեան կ'մնային, երկրի սահմանները հնդկիներու ասպատակով կ'նեղուէին։

Ֆրանսական յեղափոխութեան որոտընդոստ պայթման հետ նոր ինն դժուարութիւնք 'ի յայտ եկան։ Ուաշինդթն կ'տեսնէր որ Փարիզի պատահարքը նախընթաց վատ կառավարութեան բնական հետևանքն էին. սակայն և այնպէս՝ չնայելով իր սիրոյն առ ջոկ ջոկ ֆրանսայիս՝ խսկոյն համոզուեցաւ որ այս ազգի մեծագոյն մասը տակաւին չունէր լրջոք ազատ վիճակի մը համնելու համար պէտք եղած բարոյական վսեմութիւնը, և նոյն ժամայն մարդարէական սրտով գուշակեց ֆրանսական շարժողութեանց եղկելի վախճանը։ Ակնարկելով այս ազգի խօսքութեանց և արիւնռուշտ վրէժխնդրութեան գործերու վրայ, որով մեղապարտ կ'կոչուցանէին զինքեանք, նա կ'ըսէր. «Նաւին վտանգ սպառնացող խութ և խոչերը բաղումն են. նա կարող է ժայռի մը զարնուելով կործանուիլ և այնուհետև այս փոթորկին բռնակալութիւն մի կ'հետևի, որ քան զառաջինն չար պիտի լինի։» Ֆրանսական յեղափոխութեան մէջ երևցած առողջ գաղափարները Ամերիկայի ազատութեան համար մնասնչող ֆրանսայիներու ձեռքով բերուած էին. բայց այս գաղափարները չկրցան ընդ երկար յաջողութիւն գտնել և ստիպուեցան տեղի տալ այն զարհուրելի տագնապին, որ ազգի գաղտնային ապատիանութեանը լիովին համապատասխան էր։ Ուաշինդթն մինչև 'ի խորս սրտի գգրգեցաւ Լուդովիկ ԺԶ.ին վիճակուած պատահարէն. իր կեանքի մէջ նա երբէք այնպէս շանթահարուած և 'ի կոր ընկճուած չէր, կ'ըսէին նորա մերձաւորքն, ինչպէս որ այն չարաբաստիկ թագաւորի գլխատութեան գոյժն առնելիս։

Ֆրանսիոյ ծայրայեղութիւնքն Ամերիկայի մէջ ևս արձագանք գտան, այս տեղ ևս Յակոբիններու գաղափարներով ընկերութիւնք կազմուեցան։ Սոքա էին որ հրատարակեցին «Ուաշինդթնի թաղման հանդէսն» վերնագրով պատկերը, ուր նա -կիսէ՚Ֆիի ներքև կանգնեալ նկարուած էր. սոքա չէին ծածկեր՝ թեաւ որ կ'ցանկային ոտնակոխ անել զՈւաշինդթն և տապալել կանոնն վարչութիւնը։

Թշնամի կուսակցութեանց մոլեգին խռովութեան մէջ Ուաշինդթն նոյնպէս պինդ կանգնած էր, որպէս երբեմն Դեբլավարի վրայ, երբ կատաղի մրրիկն ու կուսակեալ սառոյցները իր նաւն խորտակելու կ'սպառնային։ Ֆրանսայի արիւնահեղ եղերան հետևանքներու շնորհիւ

Ամերիկայի ծայրայեղ դասու ազդեցութիւնն ևս հետզհետէ թուլացաւ և վերջապէս բոլորովին շիջաւ։

Յամին 1793 Ժողովուրդն երկրորդ անգամ նախագահ ընտրեց զՈւաշինկթն։ Նորա ութամեայ գործունէութիւնն անբաւ. բարիք շնորհեց երկրին և օրինակ դարձաւ յաջորդ նախագահներուն, յորոց ամենալաւերն ազգային օրէնքներու գործադրութեան մէջ միշտ հետևած են Ուաշինկթնի վարչութեան եղանակին։

Երբ երկրորդ քառամեակէն յետոյ Ուաշինկթն իմացաւ որ երրորդ անգամ ևս մեծագիր էին յանձնել իւրեան պետութեան գերագոյն պաշտօնը՝ նա հրաւիրեց հայրենակիցները առաւել նոր ձեռքերու մէջ դնել պետութեան ղեկն և յայտնեց հրապարակային գրով, որ չէր ցանկար ընտրուիլ այսուհետև։ Այն առթիւ հրաժեշտ կ'առնէր ազգէն և հեռաւեալ ոսկի խօսքերն կ'ուղղէր առ նա. «Կրօնն ու բարոյականութիւնը քաղաքային բարօրութեան անհրաժեշտ սիւներն են, որոց վրայ կը հանգչին իւրաքանչիւր մարդու պարտքերը, մարդկային երջանկութեան հզօր հաստատաններն են, զորս չէ թէ միայն բարեպաշտ հաւատացողք, այլև խոհեմ քաղաքագէտք պարտին յարգել և մեծարել։ Եթէ նոցա կարևորութիւնը մանրամասն գնել ուզենայինք՝ հատորներ գրելու պէտք կ'լինէր։ Ես միայն մեր հարց կ'առաջարկեմ. ո՞ր կ'մնայ սեպհականութեան, պատուոյ և կեանքի ապահովութիւնը, եթէ հանգչի 'ի մեզ կրօնական պարտաւորութեան զգայմունքը, որ ճշմարտութիւնը յերևան հանելու միակ միջոցն է դատարաններու մէջ։ Ոմանք կ'ըսեն թէ բարոյականութիւնը կարող է և առանց կրօնի տեղ. սակայն այսպիսի կարծիք յայտնելէ առաջ պէտք էր նախ լաւ մը քննել զայն։ Որքան և հզօր լինէր բարի դաստիարակութեան ազդեցութիւնը քանի մը անհատներու սրտին վրայ, բայց և այնպէս խելքն ու փորձը չեն զօրեր ապացուցանելու որ ազգ մի կարող էր բարոյական մնալ առանց հաւատքի։» Յաւարտ բանից նա կ'ըսէր. «Իմ վարչութեանս տարիներու վրայ հոգւոյ աչքս յետս նայելով խիղճն վկայ կը կոչեմ ինձ, որ երբէք գիտութեամբ չեմ սխալած. սակայն իմ թերութիւնքս լաւ կ'ճանաչեմ և կ'խոստովանիմ որ թերևս մի քանի բաներու մէջ վրիպած եմ։ Ինչ և լինի իմ այս վրիպակներս՝ Ջերմեռանդ սրտով կ'աղաչեմ զԱրարիչն, որ նա չափաւորէ և հեռացընէ մեզմէն նոցա չար հետևանքը։ Զեզմէ հրաժեշտ առնելիս այս յոյսն ևս իմ հետ կ'առնում, որ հայրենիքս ներող աչքով կ'նայի թերութիւններուս վրայ և քառասուն ու հինգ տարուայ Ջերմեռանդ ծառայութեանս մէջ արած

սխալանքս իմ տկարութեանը վերագրելով՝ մոռացութեան կ'ասայ զանոնք, մանաւանդ զի և ինքս յաւիտենական խաղաղութեան օթեւաններն դնալու եմ ընդ փոյթ։»

Տակաւին երկու և կէս տարի հանդիստ բախտ վայելեց նա իւր կալուածքի մէջ։ 12 դեկտեմբերի 1799 ձիով շրջելիս փոթորիկ մը բռնուելով մեռաւ։ Գործ գրուած գաղմանները բնաւ չօգտեցին. հիւանդի ընչաւորութիւնը ծանրացաւ և նա ջինջ հայեացքով և հանդիստ ձայնով ասաց բժշկին. «Հիւանդութեանս սկզբէն 'ի վեր գիտէի որ չպիտի ազատիմ. մահս ծանր լինելու է, բայց չեմ երկնչիր։ Շունչս երկար տևել չկրնար։»

Երեկոյեան լեռն ժամին նա անցաւ 'ի հանդիստ յաւիտենական։

Մահուան օրն էր 14 դեկտեմբերի 1799, երբ վաթսունեւութամեայ հասակի մէջ էր։

Կտակի մէջ Ուաշինկթն ազատութիւն կ'շնորհէր բոլոր տարուներուն՝ առանձին յիշատակութիւն տնելով ծերերու և հիւանդներու վրայ, և նշանաւոր գումար կ'թողուր մէկ համալսարանի և աղքատ տղայոց դպրոցի մը հիմնարկութեան համար։

ԺԸ

ՕՐԱՆԵՍԱՑԻ ԼՈՒՆԻ ՆՈՐԱԿՈՒՇՏԱՏԱՆԸ

Դողդոջուն ձայնով յայտնեց Ճոն–Մարշալ պատգամաւորաց ժողովոյն Ուաշինկթնի մահը։ Ունկնդիրներու սրտի յուզմունքն այնպէս ուժգին էր, որ պէտք եղաւ վերցնել նիստը։ Ընդհատեալ վերջին կամքին համեմատ նորա մարմինն առանց որ և է շքոյ և գամբանական ճառի իւր պարտէզի մէջ թաղեցին։ Աղաս որմաշէնները (ֆրանք մասոն), որոց կարգի ազնիւ կանոններուն նա իւր սիրողջկեանքին հետեւած էր անբարբառ լռութեամբ, զամբիւղի սպիտակ վարդ յանեցին գերեզմանի մէջ։

Երեսփոխանաց ժողովոյն դահերէցի աթոռն սեռով պատուեցաւ և անդամները սգոյ ղեկտ հագան մինչեւի նոյն տարուայ նստերու վերջը։ Վերայիշեալ Ճոն–Մարշալ սրտաւուչներբողի կարդաց 'ի յաւիժական բարեբանութիւն Ուաշինկթնի, և պատգամաւորք միաբան յո-

ծարութեամբ ընդունեցին նորա առաջարկութիւնը յանձնաժողով մի կազմելու, որպէս զի սա խորհէր թէ ինչ կերպով կարելի էր աւելի լաւ — մեծարել Ուաշինգթնի յիշատակը — յիշատակն այն մարդու, որ առաջինն էր պատերազմի մէջ, առաջինն խաղաղութեան ժամանակ և առաջինը հայրենակիցներու սրտին մէջ։

Ամփոփենք համառօտիւ ինչ որ երևելին Գերվինուս ասած է Ուաշինգթնի վրայ նորա բարոյ խորհրդաստ և ճարտար նկարագրութեան մէջ։

Ի՞նչ էր Ուաշինգթնի մէջ բնակողաց դաղանի զօրութեան պատճառը, որով կարող կ'լինէր իշխել մարդոց և հանգամանքներու վրայ։ Պատճառն այս էր, որ գիտէր խոնարհիլ մլուներու կարծեաց առջև և ըստ պատշաճի յարգելամն մարդոց իրաւունքն ու պահանջմունքը, որ ծանր էր բարոյ և հաստատ խորհրդով, որ պարտուց զգայմանը խստիւ կ'հետևէր և որ վերջապէս կ'սրաշտէր իւր սրտի մէջ խղճի երկնային կայծը, զոր 'ի մանկութենէ արդէն կանոն դրած էր իւր համար։ — Խորին ատելութիւն կ'զգար Ուաշինգթն խաղի դէմ, զոր կ'անուանէր աղբիւր ամենայն չարեաց, ապականիչ բնաւորութեան և առողջութեան, ոգի ժլատութեան, եղբայր անիրաւութեան, հայր կորստեան։ — Ազգային բարօրութիւնն ամեն բանէ վեր դասելով՝ նա կ'ընդունէր զպատերազմը միայն որպէս խաղաղութեան հասնելու միջոց. ռազմական յաղթանակներն ինքն ըստ ինքեան դատարկ մոտիք կ'երևէին նորա աչքին, եթէ նոքա ձեռք բերուած անկախութենէ եռան՝ նաև ժողովրդի ազատութեան և առողջ ու բարգաւաճ զարգացման երաշխաւորութիւն չտային։ — Նա կարող էր իրաւամբ ասել որ երբէք բարեկամութեան կամ ազգակցութեան աչառանօք չէր դրդուած պաշտօններ բաժանելու ժամանակ, և մինչև անգամ նոցն իսկ թշնամիք կ'խոստովանէին, որ այս նկատմամբ ոչ մի մարդ նորա չափ արդարութիւն չունէր։ — Որպէս անորժելի է տեսնել, որ նա իւր փառաց ամենաբարձր աստիճաններու վրայ անդամ պատերազմի դաշտէն զէպի մշակութեան դաշտը վերադառնալու կարօտ կ'զգար, որ կը տենչար հանգիստ առնուլ իւր այգեաց և թզենեաց ստուերի տակ — ինչնել հասարակային կեանքի բարձունքէն դէպի ընտանեկան զբօսանաց շրջանը, խորասուզիլ ներքին կեանքի քաղցր միայնութեան մէջ, որոյ շնորհած վայելքն անայլայլ են փառատենչ զինուորին և բազմատանջ պետական անձին։ — Քրիստոնէական աշխարհը հազիւ թէ կարող է որ և է զործունեայ մարդու կեանքի մէջ կրօնական բարեպաշտութեան

և խոնարհութեան երկրորդ օրինակ մի ցոյց տալ Ուաշինգթինն հատատար, որ արդարև սուրբ սրտիւ գոն կ'գործէր նմանող լինիլ Փրկչին արդարութեան, մեղմութեան, եղբայրսիրութեան, հեզութեան և հոգւոյ հանգստութեան մէջ։ — Ո՛ւր և դարձընէիք աչքերս նորա կեանքն ուշի ուշով կենելիս՝ ամենուրեք նորա բնաւորութեան պարզութիւնը կ'տեսնէիք, կ'տեսնէիք նորա կեանքի վեմ ազնուութիւնը, որ զմեզ ևս առ բարին կ'դրդէ։ Ասաքինութեան վրայ երկրայողք ափիբերան եղան նորա առջև. նորա կեանքն իւր անշուք պարզութեամբ ամենայն ինչ սուտ փառք ու փայլ նսեմացուց և նորէն տուաւ պատմութեանը հասարակային անձինքն քննելու աւելի բարձր չափ մի, որ բռնակալութեան դարերու մէջ զրեթէ խոպառ կորած էր։ Նաբոլէոնի մը գործունէութեան ակնախտիղ Ճառագայթներն թէև պահ մի խանդարեցին այս չափը, այլ չկրցան եղծանել զայն առ միշտ։ — Այսպէս Գերվինուս։

Շնորհապարտ հայրենիքն այս մեծ, իմաստուն և բարի մարդոյ պատկերն յաջորդ սերնդոց աչքի առջև յաւերժացընելու համար զանազան տեղեր 'ի յիշատակ նորա մարմարեայ արձաններ կանգնեց. նորա պատկերն այս օրս իսկ թէ պալատներու և թէ խուղերու մէջ կ'երևի։ Ցոյժ հնչին է, կ'ըսէր լնձ ամերիկացի մը, այն մարդոյ թիւն առ մեզ, որք իւրեանց տան մէջ պատուոյ տեղ մի չշնորհէին մեր մեծ բարերարի պատկերին, որ մեզ համար նոյնն եղած է, ինչ որ Ալիգուերին Սպարտացւոց և Սոլոն Աթենացւոց համար։ Եթէ նա ալևոր հնութեան մէջ ապրած լինէր և նորա մաքերն ու գործերը նոյնպէս ազգի շահին նուիրուած լինէին, յետնորդք սնահանութեան պսակ կ'հիւսէին նորա Ճակատին և յաթոռ աստուածութեան կ'ամբառնային, իբրև աստուած մի կ'պաշտէին։ — Եթէ Ուաշինգթնի պատկերը կենդանի մնայ Ամերիկացւոց սրտի մէջ, որք նոր ժամանակիս մեծ հայրենասիրի օրինակին հետևելով արդէն բովանդակ աշխարհի հիացման արժանի գործեր շինած են — այս ազգը մինչև ցարդ չերևակայած երջանկութեան պիտի հասնի։ Ցանկանք Ամերիկացւոց մեծ ազգին որ նայողուտ իւր միշտ Ուաշինգթնի կեանքովն իսկ բացուած Ճամբու վրայ գիմէ և փափաքինք որ նորա վեմ օրինակը և միւս ազգերու համար հետևելու օրինակ լինի, մանաւանդ այն մարդոյ համար, որք — ինչ կառավարութեան տակ և ինչ կ'ուզէ լինէին՝ իշխան, նախագահ, նախարար, զօրապետ, պատգամաւոր — յատկապէս ժողովրդոյ բարեօրութեան վրայ հսկելու կոչուած են։

Սակայն մեր ամենաջերմ և սրտագին փափաքներն մանուկ սերնդին կ՚վերաբերին։ Ով մանկունք ազգի, պահպանեցէք ձեր սրտի սրբարանին մէջ այս վսեմ Հայրենասիրի պատկերը, ջան դրէք նմանողելիս նորա առաքինութեանց և ասա թէ սովորեցէք նորամէն, թէ ինչպէս պէտք է սիրել ազգն և ծառայել Հայրենեաց։

ՎԵՐՋ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Գերմաներէն լեզուին փոքր՝ի շատե ճմուտ ընթերցողք կարող են Ուաշինգթոնի վրայ առելի ընդարձակ սեղեկութիւն ստանալ հետեւեալ գիրքերէն.

V. Drugelin. Das Leben Georg Washingtons.

Դրուգէլին. Դէորգ Ուաշինգթոնի կեանքը։

H. Elsner. Befreiungskampf der nordamerikanischen Freistaaten.

Էլսնէր. Հիւսիսային Ամերիկայի Նահանգներու ազատութեան պատերազմը։

G. Gervinus. Geschichte des neunzehnten Jahrhunderts.

Գերվինուս. Ինեւտասներորդ դարու պատմութիւնը։ Շատ երեւելի գործ։ Փառք այն Հային, որ Հայերէն թարգմանէ այս սիրելի հաչակ գործը։

C. Neûmann. Geschichte der Vereingten Staaten.

Նոյման. Պատմութիւն Միացեալ Նահանգաց։ Այս Նոյման, որ արդէն վախճանած է, շատ լաւ Հայերէն գիտէր։ Ունի գրած նա և Հայոց գրականութեան պատմութիւնը։

W. Pütz. Erd-und Vôlkerkunde.

Պիւց. Երկրի եւ ազգերու գիտութիւնը։ Պատուական մանկավարժի պատուական գործը, որ մեծ համբաւ կը վայելէ։

Fr. V. Raumer. Leben ûnd Briefwechsel G. Washingtons.

Ռաումէր. Դէորգ Ուաշինգթոնի կեանքն ու թղթակցութիւնը։

Fr. Steger. Allgemeine Weltgeschichte.

Շթէգէր. Տիեզերական պատմութիւն։

Y. Venedey. Georg Washington.

Վէնէդայ. Դէորգ Ուաշինգթոն։

W. Wachsmuth Historische Darstellungen.

Վաքսմութ. Պատմական պատկերներ։

G. Zeiss. Lehrbuch der allgemeinen Weltgeschichte.

Զայս. Դասագիրք Տիեզերական պատմութեան։

Բաց յայտմանէ Ուաշինգթոնի վրայ գրած են հետեւեալ մեծանուն գերմանացի պատմագրքերը, որք են՝ Շլոսէր, Վէպէր, Դանքէր, Ռոթէք, Գրուբէ, Բէքէր, եւ այլն։